AZG NEW 1.QXD 6/16/2009 11:15 PM Page 1

Ազգ Azg
17 ՀՈՒՆԻՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 111 (4247)
ISSN: 1829-1651

## Հայ-չինական կաուչուկի գործարանի փորձարկումը սկսվել է

Չինաստանում կառուցվող, շուրջ 100 հա զբաղեցնող կաուչուկի հայ-չինական գործարանում արդեն սկսվել են տեղային փորձարկումները: Շինմոնտաժային աշխատանքներն ավարտվել են: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց «Նաիրիտ-2» գործարանի փոխտնօրեն Ալբերտ Սուքիասյանը, տեղային փորձարկումներին կհաջորդի ամբողջական փորձարկումը: Հայ-չինական գործարանի կառուցման ծրագրի ողջ արժեքը, Ա. Սուքիասյանի տեղեկացմամբ, ավելի քան 140 մլն դոլար է: Գործարանի 40 տոկոսի բաժնետերը Հայաստանն է, 60 տոկոսինը՝ Չինաստանը: Հայաստանի հիմնական ներդրումն այս ծրագրում մտավոր սեփականությունն է՝ կաուչուկի արտադրության նոր տեխնոլոգիաների առումով, որոնք ապահովում են արտադրության բարձր անվտանգություն եւ անթափոնություն: Ակնկալվում է, որ նախնական շրջանում գործարանը տարեկան շուրջ 30 հազար տոննա կաուչուկ կարտադրի: Ըստ Ա. Սուքիասյանի՝ կան նաեւ արտադրության ծավալների ավելացման հեռանկարներ՝ կապված պահանջարկի հետ: Գործարանի արտադրանքն ամբողջապես պետք է սպառվի Չինաստանում:

# Դրամը սկսեց արժեւորվել՝ ինչո՞ւ

## *Կտրուկ արժեւորում, սակայն, պետք չէ սպասել*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Դոլար-դրամ փոխարժեքի թեման, որն ամենաշոշափվողն էր այս տարվա սկզբին եւ որը մի տեսակ մոռացության մատնվեց մարտի 3-ից որոշ ժամանակ անց, ամենայն հավանականությամբ առաջիկա ամիսներին կրկին կդառնա ամենաշոշափվողներից մեկը: Դրա պատճառները ներկայացնելուց առաջ նախ անդրադառնանք այս տարվա սկզբին, երբ Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կայունության ապահովման նպատակով ժամանակավորապես իրականացվում էր փոխարժեքի պահպանման քաղաքականություն, որից ԿԲ-ն հարկադրված եղավ հրաժարվել մարտի 3-ին: Այն ժամանակ նշել էինք, որ փոխարժեքի պահպանման քաղաքականությունը ժամանակավոր լինելով, լի է վտանգներով եւ դժվար կլինի պահպանել երկար ժամանակ: Եվ իսկապես, տարածվող լուրերը (նաեւ քաղաքական նպատակներով) փոխարժեքի սպասվող կտրուկ փոփոխության մասին խուճապային տրամադրություններ ստեղծեցին բնակչության մեջ եւ Կենտրոնական բանկը, մեր ունեցած հավաստի տեղեկություններով, հարկադրված եղավ հրաժարվել փոխարժեքի պահպանումից մոտ 1 ամիս ավելի շուտ, քան ի սկզբանե նախատեսված էր եղել: Մարտի 3-ին ընդունած որոշումը փոխարժեքը «բաց թողնելու» մասին, ինչպես եւ սպասվում էր, առաջին օրերին բավականին ցավագին արձագանք ունեցավ: Հետագայում ամեն ինչ սկսեց ընթանալ իր բնականոն՝ շուկայական հունով:



*Տես էջ 3*

**ԱՅՍՕՐ**

## Պաշտոնական այցով Հայաստան է ժամանում Սիրիայի նախագահը

**Նախագահի նստավայրից հաղորդում են, որ Սերժ Սարգսյանի հրավերով այսօր երկօրյա պաշտոնական այցով Հայաստան կժամանեն Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար ալ Ասադը եւ տիկին Ասմա ալ Ասադը:**

**Նույն օրը ՀՀ նախագահի նստավայրում տեղի կունենա Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունը, որին կհաջորդի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Բաշար ալ Ասադի առանձնազրույցը: Հայաստանի եւ Սիրիայի ղեկավարները հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով: Հունիսի 17-ի երեկոյան ՀՀ նախագահի եւ տիկին Ռիտա Սարգսյանի անունից՝ ի պատիվ Սիրիայի նախագահի եւ տիկին Ասմա ալ Ասադի, կտրվի պաշտոնական ընթրիք: Պաշտոնական այցի շրջանակում Բաշար ալ Ասադը հանդիպումներ կունենա նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի եւ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ, կհյուրընկալվի Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսին:**



**Հունիսի 18-ին Հայաստանի եւ Սիրիայի նախագահների մասնակցությամբ տեղի կունենա հայ-սիրիական բիզնես ֆորումի բացման արարողությունը: Նախագահ Բաշար ալ Ասադը կայցելի նաեւ Մատենադարան: Հունիսի 18-ին Սիրիայի ղեկավարը կմեկնի Հայաստանից:**

## Ամերիկյան ընկերություններն ընդդեմ Հայոց ցեղասպանության բանաձեւի

***«Ազգը» երեկվա համարում արդեն տեղեկացրել է, որ անգլիական եւ ամերիկյան 6 խոշոր ընկերություններ քարոզչություն են ծավալել ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձեւի վավերացման դեմ: Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք «Ասոշիեյթեդ պրեսի» հրապարակումը «Նյու Յորք թայմսի» հունիսի 13-ի համարում:***

Կորպորատիվ Ամերիկան սովորաբար քարոզիչների է վարձում հարկերի եւ առեւտրի վերաբերյալ հարցերում Կոնգրեսում ճնշում բանեցնելու համար: Բայց այս անգամ մի փոքր անսովոր (ոմանց բնութագրմամբ՝ նաեւ ռիսկային) քայլ կատարելով զինամթերքի արտադրության հինգ կապալառուներ եւ էներգիայի շահագործման մեկ ընկերություն վիճարկում են, թե արդյոք մոտ մեկ դար առաջ Թուրքիայի մեկ միլիոն հայերի կոտորածը պե՞տք է որակել ցեղասպանություն:

Այդ 6 ընկերությունները սերտ կապեր ունեն Թուրքիայի հետ, որը Մ. Նահանգների գլխավոր ռազմավարական դաշնակիցն է Մերձավոր Արեւելքում խաղաղության պահպանման եւ ահաբեկչության դեմ պայքարելու իր ջանքերում: Նրանցից ոչ մեկն իր դիրքորոշումը չէր բարձրաձայնել Ներկայացուցիչների պալատի որոշման վերաբերյալ, բայց արդյունաբերության վերլուծողների եւ ուրիշների կարծիքով՝ նրանք քարոզարշավ են մղել ընդդեմ այս բանաձեւի՝ ցույց տալու համար, որ պաշտպանում են Թուրքիային՝ զենքի եւ այլ արդյունաբերական արտադրանքների իրենց կարեւոր շուկային:

*Տես էջ 3*

## Փոփոխություններ Պոլսո հայոց պատրիարքի ընտրության կանոնակարգում

**Այդ մասին երեկվա համարում նշել է թուրքական «Հյուրիեթ» թերթը: Ինչպես հայտնի է, Կ. Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը վատառողջության պատճառով ի զորու չէ կատարել զբաղեցրած պաշտոնից բխող պարտականությունները: Ելնելով այս հանգամանքից, պատրիարքարանի հոգեւոր խորհուրդը, «Հյուրիեթի» վկայությամբ, դիմել է վարչապետ Էրդողանի կառավարությանը եւ պահանջել վերանայել պատրիարքի ընտրության կարգը:**

**Ըստ «Հյուրիեթի», դիմումում հոգեւոր խորհուրդը կառավարության ուշադրությունն է հրավիրել Մութաֆյան պատրիարքի առողջական վիճակի վրա, խնդրել է, որ Պոլսո հայոց 85-րդ պատրիարքն առաջիկայում ընտրվի «աթոռակցի» կարգավիճակով, որպեսզի իրավահավասարության հիմունքներով պահպանվեն Մեսրոպ Բ-ի լիազորությունները: Կառավարությունը հավանություն է տվել պատրիարքարանի հոգեւոր խորհրդի դիմումին եւ որոշել է վերանայել «Պատրիարքի ընտրության կանոնակարգը», որը դեռեւս նախարարների խորհրդի որոշումով Թուրքիայում ուժի մեջ էր մտել 1961-ից: Նոր պատրիարքի ընտրության մասին հաջորդ դիմումը կառավարությանը կներկայացվի առաջիկա ամիսներին:**

**Հ. Չ.**

*Տես՝ նաեւ էջ 2*

## Դատապարտվեցին 08/05 ընտրական հանձնաժողովի երկու անդամներ

**Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը երեկ, արագացված դատաքննության կարգով քննելով քրեական գործը, Նորիկ Եղիազարյանին եւ Արմեն Օհանյանին մեղավոր ճանաչեց քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու մեջ («Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը») եւ յուրաքանչյուրին 3 տարի ժամկետով ազատազրկման դատապարտեց: Նրանք մեղադրվում են, որ լինելով Երեւանի ավագանու ընտրությունների ընթացքում ձեւավորված թիվ 8 ընտրատարածքի 5-րդ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ՝ մայիսի 31-ին թվով 16 ընտրողների կողմից քվեաթերթիկները քվեատուփերի մեջ անձամբ չգցելու հանգամանքից օգտվելով, քվեաթերթիկները պատճենահանելու միջոցով քվեարկել էին Հանրապետական կուսակցության օգտին: Արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի 2/3-ը, իսկ եթե առավել խիստ պատժի 2/3-ը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա՝ առավել մեղմ պատիժը:**

## Հունիսի 19-ին ԱԺ-ն կքննարկի համաներման առաջարկը

**Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի որոշմամբ, հունիսի 19-ի ժամը 12-ին կգումարվի ԱԺ-ի արտահերթ նիստ: Ինչպես հայտնեցին ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունից, օրակարգում ընդգրկված է ՀՀ նախագահի առաջարկությունը համաներում հայտարարելու մասին:**

## Ֆոնդային սակարանում

**Հունիսի 16-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացվել է 4510000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 366.97 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Փակման գինը կազմել է 367 դրամ:**

## «Հայաստանի հետ հաշտեցման ենք ձգտում, որովհետեւ փչացնում է մեր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ»

### *Հայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն*

Ինչպես երեկ նշել է Նյու Յորքի Turkishny.com կայքէջը, Ահմեդ Դավութօղլուն վերստին անդրադարձել է Հայաստան-Թուրքիա հարաբերություններին, արտահայտվելով դրանց նորմալացման օգտին: Նա ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայ-թուրքական հարաբերությունները ոչ միայն ազդում են Հարավային Կովկասի քաղաքական զարգացումների, այլեւ Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների վրա, եւ ասել է. «Դա ճիշտ չէ: Հայաստանի հետ մեր հարաբերությունները չպետք է ներազդեն թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա»:

Trend News-ի հարցերին պատասխանելիս, Դավութօղլուն անդրադարձել է Հայաստան-Թուրքիա երկխոսությանն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: «Հայաստանը պնդում է, որ Թուրքիայի հետ բանակցություններում Ղարաբաղի հարցը չի քննարկվում: Դա ճի՞շտ է» հարցին Դավութօղլուն տվել է հետեւյալ պատասխանը. «Այդ հարցում ակնհայտ է մեր քաղաքականությունը: Հայաստանի հետ երկխոսությունից զգում ենք, որ նա Կովկասում ձգտում է խաղաղության եւ բարգավաճման: Մենք բարիդրացիական քաղաքականության շրջանակներում ուզում ենք էլ ավելի նորմալացնել երկկողմ կապերը»:

«Ճի՞շտ է, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ «ճանապարհային քարտեզի» շուրջը ծավալվող բանակցություններին այդքան կարեւորություն այլեւս չի տրվում, որքան վարչապետ Էրդողանի Բաքու այցելությունից առաջ էր» հարցի առնչությամբ արտգործնախարար Դավութօղլուն ասել է. «Ոչ, ճիշտ չէ: Հայաստանի հետ բանակցությունների հարցում բավականին վճռական ենք, նույն տարածաշրջանի մաս ենք կազմում: Այդ իսկ պատճառով էլ պատրաստ ենք կառուցողական լինել եւ խուսափել այն գործողություններից, որոնք կվնասեն բանակցություններին»:

Հունիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահությունն անցնում է Թուրքիային: Trend News-ը, ելնելով դրանից, Դավութօղլուին հարցրել է, թե արդյոք նախագահությունը ստանձնող Թուրքիան Ղարաբաղի հարցը Անվտանգության խորհրդի օրակարգում ընդգրկելու ծրագրեր չունի՞: Դավութօղլուն ընդգծել է. «Այդպիսի ծրագրեր, իհարկե, ունենք: Թուրքիան կողմ է Ղարաբաղի նման միջազգայնացված հիմնախնդիրների ընդգրկմանը (ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի) օրակարգում: Ցանկանում ենք, որ արդյունավետ լինեն Հայաստանի հետ Ադրբեջանի բանակցությունները: Այդ հիմնահարցով հետաքրքրվում ենք նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Վաշինգտոն կատարած այցի ընթացքում քննարկել եմ ամերիկյան կողմի հետ: Քննարկումներում հանգել ենք հարցի կարգավորմանը համատեղ ջանքերով ամեն կերպ նպաստելու ընդհանուր եզրակացության»:

Հ. Չ.

AZG NEW 2.QXD 6/16/2009 10:53 PM Page 1



# «Ժառանգություն» կուսակցությունից ահազանգում են, թե «մարտի 1-ը ավարտված չէ»



Մայիսի 31-ից հետո Երեւանում տեղի ունեցող հետընտրական զարգացումների ու փոփոխությունների համատեքստում «Ժառանգության» խմբակցության անդամ, ԱԺ պատգամավոր **Ստյոպա Սաֆարյանը** «իշխանական կոալիցիայի լոկոմոտիվ համարվող ՀՀԿ-ում» նկատում է լուրջ փոփոխություններ: «Ժառանգության» պատգամավորը դա բացատրում է, որ խորհրդարանական ընտրություններից հետո ԱԺ-ում մեծամասնություն կազմող հանրապետականները քառաթեւ կոալիցիա ստորագրեցին, մինչդեռ քաղաքապետի ընտրության ժամանակ ակնհայտ դարձավ, որ «ՀՀԿ-ն իր հաղթանակը չի ցանկանում որեւէ մեկի հետ կիսել»: Սաֆարյանին չի զարմացնում ԲՀԿ-ի՝ քաղաքապետարանում կոալիցիա կազմելու առաջարկից հրաժարվելը: «Իրենք են իշխանությունը, թո՛ղ իրենք էլ խնդիրները լուծեն: Սա է ԲՀԿ-ի մտածելակերպը: Մայիսի 31-ից հետո Սերժ Սարգսյանը որպես ՀՀԿ եւ ՀՀ նախագահ, փաստորեն, ազդարարեց, որ ՀՀԿ-ն որեւիցե մեկի հետ չի ցանկանում կիսել իր հաղթանակը», նկատում է Սաֆարյանը: Պատգամավորը չբացառեց նաեւ խորհրդարանական կոալիցիայի փլուզում: «Եթե ՀՀԿ-ն չփոխի խնդիրների լուծման եւ ընդհանրապես ամեն ինչի վերաբերյալ իր մոտեցումները, ապա նման միտումներն անկասկած ազդելու են նաեւ կոալիցիայի ներքին կոնֆիգուրացիայի վրա»:

Փոփոխություններ կան նաեւ ընդդիմադիր բեւեռում: Սաֆարյանը տեսնում է բազմաթիվ հարցեր, որոնք մնացել են անպատասխան: Սաֆարյանին անհասկանալի է, օրինակ, ՀԱԿ-ի «պայքարը թեւակոխում է 3-րդ փուլ» արտահայտությունը: Նա անհանգստանում է եւ ահազանգում, որ պայքարի կրկնություն թույլ չտրվի: Լեւոն Տեր-Պետրոսյանի հրապարակած 12 կետերն էլ դժվարանում է «նոր փուլ» անվանել, զուտ այն պատճառով, որ այդ կետերում ներառված խնդիրները լուծելու պահանջը կար նաեւ պայքարի առաջին եւ երկրորդ փուլում: Սաֆարյանը որպես լուծում առաջարկում է համագործակցության նոր բանաձեւի մշակումը, քանի որ ընդդիմադիր դաշտում հստակեցում չկա:

## Համաներումը չի արդարացնի ընդդիմության ակնկալիքները

Ստյոպա Սաֆարյանը՝ ներկա գտնվելով մարտի 1-ի գործով կալանավորվածների դատավարություններին՝ հանգել է «մարտի 1-ը ավարտված չէ» եզրակացությանը: «Պարզապես իրականացման ձեւերն ու մեթոդներն են փոխվել: Հետեւաբար կարող եմ փաստել, որ մարտի 1-ը շարունակվում է: Դրան նպաստեցին նաեւ փաստահավաք խմբի լուծարումը եւ համաներման գաղափարը, հետեւաբար իշխանությունները կոնֆլիկտը տրանսֆորմացիայի են ենթարկում»: Սաֆարյանը շարունակվող մարտի 1-ը կանխելու համար առաջարկում է ընդդիմադիր ուժերին պայքարի օրակարգ ձեւակերպել ու քաղաքական համակարգում բարեփոխումներ անցկացնել:

Ստյոպա Սաֆարյանը վստահ է, որ համաներումը չի լինելու այն բովանդակությամբ եւ ընդգրկմամբ, ինչպիսին ցանկանում է ընդդիմությունը: Նա չի բացառում, որ ՀՀ իշխանությունների դիրքորոշումը կլինի միակողմանի՝ առանց կոմպրոմիսի: «Ուշադրություն դարձրեք Սերժ Սարգսյանի մայիսի 28-ին արված հայտարարությանը: Նախագահն ասաց, որ չի ցանկանում համաներում անել որպես սեփական քայլ: Սա նշանակում է, որ ընդդիմությունը պետք է մեղա գա, համաներման խնդրանքով դիմում գրի: Հետեւաբար համաներումը կլինի մասնակի: Ընդամենը տարրական զոնդաժ է եւ արվում է ռեակցիաները ստուգելու համար», ասաց Սաֆարյանը: «Ժառանգությունում» նաեւ վստահ չեն, որ համաներումից հետո մարտի 1-ի գործով կալանավորված ԱԺ պատգամավորները կկարողանան աշխատել խորհրդարանում: «Նրանց այս կերպ կպատժեն»:

## ՀԱԿ-«Ժառանգություն», ՀՅԴ-«Ժառանգություն» համագործակցությու՞ն

Ստյոպա Սաֆարյանը վստահ է, որ վերջերս Րաֆֆի Հովհաննիսյանի քաղաքական էլիտայում ընդդիմադիր երկու ուժերին՝ ՀԱԿ-ին եւ ՀՅԴ-ին արած համագործակցության առաջարկությունը արձագանք կստանա: Եթե եռաթեւ կոալիցիա չստացվի, ապա «Ժառանգությունը» պատրաստ է առանձին համագործակցել քաղաքական ուժերի հետ. ՀԱԿ-ի հետ կփորձեն երկրում հաստատել «ներքին ժողովրդավարություն», իսկ ՀՅԴ-ի հետ խորհրդարանում կփորձեն ազգային գաղափարների շուրջը համագործակցել: Սաֆարյանն այլ մանրամասներ չհաղորդեց, սակայն բացառեց կոտրած տաշտակի մտայնությունը:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Դեռահասների եւ երիտասարդների վերարտադրողական առողջության պահպանումը՝ քննարկման նյութ



Երեկ Ազգային ժողովի առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի օժանդակությամբ, կազմակերպել էր քննարկում նվիրված Հայաստանում դեռահասների եւ երիտասարդների վերարտադրողական առողջության հիմնախնդիրներին:

ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրով սահմանված մարտահրավերների 8 նպատակներից 3-ը անմիջականորեն առնչվում են վերարտադրողական եւ սեռական առողջությանը, դրանք են՝ մանկական մահացության նվազեցում, մայրական առողջության բարելավում եւ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքար:

Ինչպես նշեց ԱԺ առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արա Բաբլոյանը**, հանձնաժողովը խիստ կարեւորում է ՀՀ-ում դեռահասների եւ երիտասարդների վերարտադրողական առողջության խնդիրները՝ օրենսդրության կատարելագործման, միջգերատեսչական համագործակցության խթանման, դեռահասների եւ երիտասարդների առողջ ապրելակերպին նվիրված ռազմավարություն իրականացնելու համար: Քննարկմանը հանդես եկան ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ **Գայանե Ավագյանը**, ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից **Անահիտ Մուրադյանը**, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամից **Արսեն Մկրտչյանը**, շատ ուրիշներ:

Պրն Բաբլոյանը նշեց, որ «հետապնդելով մայրական մահացության կանխարգելումը, նորածնային հասակի մահացությանը, մենք պետք է կարողանանք մեծ աշխատանք իրականացնել, որովհետեւ դեռահասների մոտ կարող են լինել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ եւ վերարտադրողական առողջությունների վրա ազդող հիվանդություններ: Հենց այդ առումով պետք է իրականացնել միջոցառումներ, որպեսզի չլինեն անցանկալի հղիություններ, աբորտների թիվը չավելանա, եւ շատ ուրիշ այլ խնդիրներ»:

Իսկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անցած տարվա ընթացքում վիժումների թիվը կազմել է 7 տոկոս, աբորտները (հղիության արհեստական ընդհատում)՝ 45 տոկոս, իսկ նորմալ ծնունդները՝ 48 տոկոս: Քննարկվեցին նաեւ բնակչության իրազեկմանը նվիրված հարցեր, առաջարկ արվեց դրանց թիվը դպրոցներում եւ բուհերում ավելացնել: Իսկ մարզերում հատուկ ուշադրություն դարձնել վերապատրաստված ուսուցիչներով իրազեկման դասընթացների անցկացմանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԵՌԱԽՕՍԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# Պարզաբանում է Պոլսո «Ժամանակ» թերթի խմբագիրը

**«Հյուրիեթի» հրապարակման առնչությամբ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով «Ազգը» երեկ հեռախոսազրույց ունեցավ Պոլսո «Ժամանակ» օրաթերթի խմբագրապետ Արա Քոչունյանի հետ: Ահա թե ինչ ասաց նա. «Հրապարակումը մեզ համար անակնկալ էր, թեկուզ ոչ 100 տոկոսով, այնուամենայնիվ դիմեցինք պատրիարքարան, որտեղից էլ մեզ ասացին, որ դեռեւս որեւէ պաշտոնական դիմում կառավարությանը չի ներկայացվել, թեեւ այդ մասին մեր թերթն էլ հրապարակել էր: Անկախ դիմումի բացակայությունից, հարցը ոչ պաշտոնական խոսակցություններում շրջանառվում էր, որպեսզի նախապայման ստեղծվի համապատասխան դիմումի համար»: Իսկ մեր հարցին, թե արդյոք տեղապա՞հ է ընտրվելու պատրիարքի փոխարեն, պրն Քոչունյանն ասաց. «Քանի դեռ կենդանի է Մեսրոպ Բ Մութաֆյան պատրիարքը, տեղապահի հարց լինել չի կարող, ուստի պատրիարքական ընտրությունները նշանակելու դեպքում «աթոռակից» պատրիարք է ընտրվելու: Քանի որ կա փոխանորդ, ուստի իրենք չեն ուզում նոր պատրիարք ընտրվի»:**

**«Ինչպիսի՞ն է համայնքի կարծիքը» հարցին պատասխանելիս պրն Քոչունյանը պարզաբանեց. «Երկար խոսակցություններից հետո համայնքը քիչ թե շատ հաշտվեց «աթոռակցի» ընտրության գաղափարի հետ: Ի դեպ, այս երեւույթն առաջին դեպքն է լինելու, եթե պատրիարքական ընտրություններում «աթոռակից» ընտրվի: Ես չէի ասի, որ 100 տոկոսով համամիտ եմ, բայց առարկայական պատկերն այդպես է»: Իսկ իմ հարցին, թե եկեղեցին քիչ թե շատ համաձա՞յն է աթոռակցի ընտրությանը, խմբագրապետն ասաց. «Կարծես թե այդպես է»:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Տնտեսագիտական համալսարանում ամփոփիչ քննություններն առանց դասախոսների անցկացվեցին



**Գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգի բարենորոգման ճանապարհին միջանկյալ եւ ամփոփիչ քննությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ձեռնարկվում են նոր քայլեր՝ ուսանողների գիտելիքները համակարգչի միջոցով թեստային համակարգով ստուգելու համար: Համալսարանի ռեկտորատը ջանում է այդ կերպ բացառել կոռուպցիոն ռիսկերը, գնահատման շեղումները, ծածկագրից օգտվելը, որպեսզի բուհական քննությունները դառնան գիտելիքի ստուգատես՝ առանց ավելորդ լարվածության ու սթրեսների: Նախապատրաստական ծավալուն աշխատանքներից հետո առաջինից երրորդ կուրսեցիները տնտեսագիտության տեսություն եւ մենեջմենթ առարկաներից քննություններ հանձնեցին ոչ թե դասախոսի, այլ համակարգչի առջեւ նստած: 50 րոպեի ընթացքում ուսանողներից յուրաքանչյուրը պատասխանեց համակարգչի առաջադրած թեստի 30 հարցին՝ տնտեսագիտության տեսություն առարկայից: Ներդրված ծրագրի միջոցով գնահատումը նույնպես կատարվում է համակարգչի միջոցով: Դասախոսները բնավ չեն մասնակցում քննություններին, լսարանում ներկա է լինում միայն համալսարանի համակարգչային կենտրոնի աշխատակիցը՝ զուտ տեխնիկական հարցերը լուծելու համար: Համալսարանի ղեկավարները քննությունների ընթացքին կարող են հետեւել միայն ապակյա դռների հետեւում կանգնած:**

**Համալսարանի ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Յուրի Սուվարյանի համոզմամբ, քննության այս եղանակը ե՛ւ ժամանակակից է, ե՛ւ արդյունավետ, քանի որ ուսանողը հարմարավետ միջավայրում է եւ առանց ավելորդ լարվածության ստուգում է իր գիտելիքները՝ ստանալով համարժեք գնահատական: Միեւնույն ժամանակ ստեղծվում է մրցակցություն, գործում է փոխատեղման կարգը (վճարովիից անցում անվճար ուսուցման համակարգ եւ հակառակը), եւ ուսանողը համոզվում է, որ իր համակուրսեցին արդարացի ճանապարհով է վաստակում բարձր գնահատականը: «Ոչ պակաս կարեւոր է, որ նմանատիպ մոտեցմամբ նվազագույնի են հասցվում ստվերային երեւույթները, անհարկի միջնորդություններն ու միջամտությունները», ասաց ռեկտորը:**

**Տնտեսագիտության տեսություն ամբիոնի դոցենտ Ա. Մարգարյանը նշեց, որ թեստային հարցաշարն ընդգրկում է դասընթացի նյութը, որով կարելի է ստույգ ու ճշգրիտ պարզել յուրաքանչյուր ուսանողի գիտելիքի մակարդակը. «Ուսանողը պետք է մեկընդմիշտ հասկանա, որ համալսարան ընդունվում է միայն գիտելիքներ ձեռք բերելու համար»:**

**Հետաքրքրական էր լսել նաեւ հաշվապահական հաշվառում եւ աուդիտ եւ բիզնեսի կազմակերպում մասնագիտությունների առաջին կուրսեցիների կարծիքները. «Հուզված եմ, որովհետեւ ցածր միավոր եմ ստացել: Բայց մեղքն իմն է, լավ չէի պատրաստել: Հաջորդ քննությանն ավելի լավ կպատրաստվեմ», ասաց Քրիստինե Աֆյանը: Իսկ Արամ Շեգունցն ուրախ էր, որովհետեւ ստացել էր բարձր՝ 34,67 միավոր. «Քննության այս ձեւն արդարություն է ապահովում, եթե տարվա ընթացքում պարապենք, արդյունքն անպայման կերեւա»: Իհարկե, քիչ չէին նաեւ դժգոհող ուսանողները, որոնց կա՛մ ժամանակը չէր բավարարել, կա՛մ թեստն անչափ դժվարին էր թվացել:**

**Ինչպես ամեն մի նորամուծություն, գիտելիքների ստուգման թեստային մեխանիկական եղանակը նույնպես բարելավման կարիք կունենա, սակայն համակարգն արդեն ներդրված է եւ նոր ուսումնական տարում այդ ձեւով կընթանան քննական բոլոր առարկաների ստուգումները:**

ՍԱԹԵՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են՝ համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 6/16/2009 9:33 PM Page 1



# Համաներումը՝ Հայաստանի «փրկօղակ»

## Մինչեւ ԵԽԽՎ հունիսյան նիստ համաներումը կղարչնեն իրականություն

**Հայաստանում են ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցողներ Ջոն Պրեսկոտն ու Ժորժ Կոլոմբիեն: Համազեկուցողների օրակարգում հանդիպումների շարք է Հայաստանի նախագահի, Ազգային ժողովի նախագահի նաեւ Հայաստանի առաջին նախագահի հետ, հանդիպումներ նաեւ «Յոթի գործով» մեղադրյալների փաստաբանների, նաեւ մեղադրյալների ընտանիքի անդամների հետ:**

**Համազեկուցողների այցելության ընթացքում նախատեսվում է նաեւ հանդիպումներ ԱԺ «Մարտի 1-ի» հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանի, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի, օմբուդսմեն Արմեն Հարությունյանի, ԵԽ անդամ երկրների դեսպանների, նաեւ լուծարված փաստահավաք խմբի անդամների հետ: Համազեկուցողները այս այցից հետո պատրաստելու են մոնիտորինգի հանձնաժողովի փարիզյան նիստում ներկայացված զեկույցի եզրափակիչ մասը կամ, հնարավոր է, բանաձեւի նախագիծ, որ կներկայացվի արդեն ԵԽԽՎ լիագումար նիստում:**

**Համազեկուցողները երեկ հանդիպումներ են ունեցել խորհրդարանում: ԱԺ փոխնախագահի, մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների եւ դրանց պատճառների ուսումնասիրության ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանը ներկայացրել է, որ ժամանակավոր հանձնաժողովն սկսում է ամփոփել ձեռքի տակ եղած, ինչպես նաեւ փորձագետների փաստահավաք խմբի տրամադրած նյութերը եւ անցնում դրանց ուսումնասիրման, համադրման եւ եզրակացության պատրաստման գործընթացին:**

**Նիկոյանը տեղեկացրել է նաեւ, որ հանձնաժողովը չի կարողացել զոհվածների մահվան հանգամանքների հետ կապված իր առջեւ դրված խնդիրները կատարել: Հանձնաժողովի առջեւ դրված մյուս երկու խնդիրների՝ տեղի ունեցած բռնությունների, ինչպես նաեւ ոստիկանության գործողությունների իրավաչափության եւ համաչափության ուսումնասիրության եւ նման իրադարձությունների կրկնումը բացառող քաղաքական, իրավական եւ այլ լուծումների առաջարկությունների ներկայացման մասով, ըստ Ս. Նիկոյանի, հանձնաժողովը պատրաստ է եզրակացություն տալ:**




**Համազեկուցողներ Ջոն Պրեսկոտը եւ Ժորժ Կոլոմբիեն հանդիպումներ են ունեցել նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի, ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության անդամների հետ: Աբրահամյանը համազեկուցողներին հայտնել է, որ ստացել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի նամակը՝ համաներում հայտարարելու առաջարկով, եւ ուղարկել ԱԺ պետաիրավական հանձնաժողով եւ կառավարություն՝ եզրակացություն ստանալու համար: Հարցը կքննարկվի հունիսի 19-ի ԱԺ արտահերթ նստաշրջանում:**

**Հայաստանի գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը եւս ընդունել է համազեկուցողներին, քննարկվել են մարտի 1-2-ի զանգվածային անկարգությունների կապակցությամբ հարուցված քրեական գործի նախաքննության արդյունքներին վերաբերող հարցեր:**

**Գլխավոր դատախազության մամուլի ծառայության համաձայն, համազեկուցողները տեղեկացվել են, որ մարտի 1-2-ի իրադարձություններում 10 մահվան հանգամանքների որոշ հարցերի պարզաբանման համար բանակցություններ են անցկացվել տարբեր երկրների փորձագետների հետ՝ ոստիկանների կիրառած հատուկ միջոցների նույնացման հարցով, սակայն բոլորն էլ նշել են, որ հատուկ միջոցներից արձակված փամփուշտները հնարավոր չէ նույնացնել: Նախաքննությունն այս ուղղությամբ շարունակվում է:**

**Հանդիպման ընթացքում շոշափվել է նաեւ մարտի 1-2-ին տեղի ունեցած անկարգություններին մասնակցելու, կազմակերպելու համար դատապարտված անձանց նկատմամբ հնարավոր համաներման կիրառմանը վերաբերող հարցեր: Գլխավոր դատախազը նշել է, որ ըստ ամենայնի հնարավոր համաներումը կտարածվի նաեւ նշված արարքները կատարելու համար դատապարտված շատ անձանց վրա:**

**Համազեկուցողները զրույց են ունեցել նաեւ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի հետ: Ըստ օմբուդսմենի գրասենյակի, հանդիպմանը խոսվել է համաներման, քրեական գործերում ներգրավված վկաների խնդիրների, նաեւ փաստահավաք խմբի գործունեության մասին: Արմեն Հարությունյանի դիրքորոշմամբ, համաներումը պետք է տարածվի մարդկանց լայն շրջանակի վրա՝ ներառյալ մարտի 1-2-ի դեպքերի հետ կապված ազատազրկվածներին:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Դրամը սկսեց արժեւորվել՝ ինչո՞ւ

*1-ին էջից*

Բնականոն հունը այն էր, որ մեր ազգային արժույթը 4-5 տարվա արժեւորումից հետո ամբողջ աշխարհն ու նաեւ մեզ համակած ճգնաժամի պատճառով արժեզրկվեց մոտ 20 տոկոսով եւ վերջին 3-4 ամիսներին սկսվեց տատանվել 1 դոլարի դիմաց 370-380 դրամ միջակայքում: Եթե նկատի ունենանք արտահանման եւ տնտեսական աճի տեմպերի կրճատումը, պահանջարկի անկումն ու տնտեսական ակտիվության նվազումը, ապա հասկանալի է, որ որեւէ ներքին ազդակ դրամի արժեւորման համար չկար: Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքների իջեցումը, նպատակ ունենալով խրախուսել տնտեսական ակտիվությունը, նույնպես նպաստում էր դրամի արժեզրկմանը: Արտաքին գործոններն էլ նպաստավոր էին դրամի արժեզրկման համար: Այսինքն, ԱՄՆ դոլարը, ուռճացած սպառման անկման արդյունքում, արժեւորվել էր, ինչն իր ազդեցությունն էր թողնում մյուս երկրների արժույթների, այդ թվում նաեւ մեր դրամի վրա: Ի՞նչն է փոխվել այժմ եւ ինչո՞ւ պետք է առաջիկա ամիսներին սպասել դրամի արժեւորմանը:

Արդեն նախորդ երկու օրերին 1 դոլարի դիմաց դրամի փոխարժեքը Հայաստանի ֆոնդային բորսայում սկսեց նվազել 370-ից եւ դարձավ նախ 369, ապա 366 դրամ: Երեկ բանկերի մասնաճյուղերում եւ փոխանակման կետերում փոխարժեքը կազմում էր 366-369 դրամ՝ 1 դոլարի դիմաց: Հիմնական պատճառը, որ սկսում է ազդել փոխարժեքի վրա, դոլարային ներհոսքն է Հայաստան: Համաշխարհային բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի տրամադրած վարկերն արդեն մուտք են գործել մեր տնտեսության մեջ, որին կավելանա բառացիորեն վերջին օրերին Ռուսաստանի տրամադրած 500 մլն դոլարի վարկը: Այսինքն, այս տարվա ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ կսկսվի շրջանառվել մոտ 500 մլն-1 մլրդ դոլար:

Դրամի արժեւորման վրա ազդող արտաքին գործոններից հիմնականը լինելու է ԱՄՆ նոր նախագահի եւ կառավարության կողմից իրականացվող ավելի քան 850 մլրդ դոլար արժողությամբ տնտեսության առողջացման ծրագիրը: Այդ միջոցները պարզապես էմիսիոն գումարներ են, որոնք տրամադրվելու են ընկերությունների առողջացմանը, առաջացնելու են դոլարի արժեզրկում եւ մեծ հաշվով հող ստեղծելու հաջորդ ճգնաժամի համար: Իհարկե, եթե այդ քաղաքականությունը ԱՄՆ-ում պահանջվածից ավելի երկար շարունակվի: Ամեն պարագայում, աշխարհում դոլարի արժեզրկումն ազդելու է նաեւ դրամի արժեւորման վրա:

Այդուհանդերձ, հարկ չկա ակնկալել, որ դրամի արժեւորումը զգալի կլինի եւ կհասնի նախկին՝ 1 դոլարի դիմաց 305 դրամի ցուցանիշին: Փոխարժեքի վերաբերյալ կոնկրետ կանխատեսումներ անելը բավականին բարդ խնդիր է, եթե նկատի ունենանք, որ փոխարժեքը ձեւավորվում է բազմաթիվ գործոններից, բայց կարելի է շատ մոտավոր ենթադրել, որ մինչեւ տարեվերջ կգտնվի 1 դոլարի դիմաց 350-360 դրամի շրջակայքում: Բանն այն է, որ մինչեւ տարեվերջ տնտեսական աճի նախկին տեմպը, արտահանման եւ արտերկրից եկող մասնավոր փոխանցումների նախկին ծավալները չեն վերականգնվի, իսկ Կենտրոնական բանկն էլ, նպատակ ունենալով խթանել տնտեսական ակտիվությունը, կշարունակի տոկոսադրույքների իջեցման քաղաքականությունը: Միաժամանակ, աշխարհում ԱՄՆ դոլարի արժեզրկումն էլ բավականին հեռու կլինի այն տեմպից, ինչն ուներ մինչեւ ճգնաժամը: Հետեւաբար, եթե արհեստական խուճապ չհրահրվի, ապա մեր արտարժույթի շուկայում կտրուկ տատանումներ չեն լինի:

# Ամերիկյան ընկերություններն ընդդեմ Հայոց ցեղասպանության բանաձեւի

*1-ին էջից*

«Նրանք չեն ցանկանում երեւալ, որ դեմ են բացահայտ մարդու իրավունքների գործոններ պարունակող բանաձեւին: Դա նրանց կդասեր պատմությունը եւ ցեղասպանությունը ժխտողների շարքին», ասում է Վաշինգտոնում Հայ ազգային ինստիտուտի տնօրեն Ռուբեն Ադալյանը:

BAE Systems Inc-ը, Goodrich Cor.-ը, Northrop Grumman Corp-ը, Raytheon Co-ը, United Technologies Corp-ը եւ էներգարդյունաբերող Chevron Corp-ը 14 միլիոն դոլար են ծախսել այս տարվա առաջին քառորդում Կոնգրեսում քարոզչություն ծավալելու համար: Բացի ցեղասպանությունից քարոզչությունը ընդգրկել է նաեւ Պենտագոնի ծախսերը, կլիմայի փոփոխությունները, հարկերը եւ այլն:

«Յունայթեդ թեքնոլոջիզ» ընկերությունը, որը «Սիկորսկի» տեսակի ուղղաթիռներ է վաճառում Թուրքիային, հայտնել է, որ օրենսդիրներին տեղեկություններ է տրամադրել, որպեսզի «նրանք ավելի լավ հասկանան, թե ինչ է նշանակում միջազգային առեւտուր եւ նրանում ընդգրկված ազգային անվտանգություն հասկացությունները»:

Բայց բանաձեւի դեմ քարոզող գործարարները «լավ կորպորատիվ քաղաքացիներ» չեն կարող լինել, նշել է Ադամ Շիֆը (դեմոկրատ՝ Կալիֆոռնիայից):

«Մարդու իրավունքների վերաբերյալ քարոզչությունը ռիսկի է առնչվում», ավելացրել է Արիզոնայի պետհամալսարանի Վ. Պ. Քարիի անվան բիզնեսի ֆակուլտետի փոխդեկան Ջերրի Կեիմը: 1980-ականներին որոշ ընկերություններ դադարեցրին Հարավային Աֆրիկայի սահմանափակումների դեմ իրենց ջանքերը: «Սկզբում նրանք մտահոգված էին այդ տարածաշրջանի շուկաներով, բայց հետո սկսեցին մտահոգվել այստեղի շուկաներով», բացատրում է Կեիմը:

Այլ մեկնաբաններ գտնում են, որ այդ ընկերությունների դեմ հասարակության հակազդեցությունը չնչին կլինի, քանի որ դրանք՝ ընկերությունները կառավարությանն են ծառայում եւ ոչ թե անհատ սպառողներին, որոնք կարող են բոյկոտել եւ չգնել նրանց թողարկած արտադրանքները:

Ներկայացուցիչների պալատի (ՆՊ) արտաքին գործերի կոմիտեն նորից չի քննարկել բանաձեւը: Սենատն էլ դեռ որեւէ տարբերակ չունի այդ առնչությամբ: ՆՊ-ի վերոնշյալ կոմիտեի անդամներից մեկն ասել է, որ դեռ հայտնի չէ, թե երբ բանաձեւը կրկին կդրվի քվեարկման, քանի որ ներկայումս ավելի հրատապ հարցեր (Պակիստան, պետքարտուղարության կողմից նյութական հատկացումներ եւ այլն) կան:

Ըստ պատմաբանների, մինչեւ մեկուկես միլիոն, հիմնականում քրիստոնյա հայեր սպանվեցին օսմանյան թուրքերի կողմից Առաջին աշխարհամարտի օրերին: Թուրքիան ժխտում է, որ կատարվածը ցեղասպանություն էր, ասելով, որ մահացածների թիվը ուռճացված է եւ դրանք քաղաքացիական պատերազմի եւ խռովությունների հետեւանք էին:

Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանությունը չպատասխանեց մեկնաբանություններ հայցող (մեր) հեռախոսազանգերին եւ էլփոստային հաղորդագրություններին:

Նախքան Գերմանիայում համակենտրոնացման մի ճամբար այցելելը, այս ամսվա սկզբներին նախագահ Բարաք Օբաման հայտարարեց, որ աշխարհը պարտավորված է դադարեցնել ցեղասպանությունները, եւ իր կառավարությունը ամեն ջանք գործադրում է ցեղասպանությանը վերջ դնելու Դարֆուրում (Սուդան):

Նախընտրական արշավում Օբաման խոստացավ «ճանաչել հայերի ցեղասպանությունը» ընտրվելու դեպքում, բայց ապրիլին Թուրքիայում ելույթ ունենալով, նա խուսափեց այդ բառից: Ըստ Շիֆի, «ինն սունչորս տարի առաջ հայերի սպանությունները ցեղասպանություն որակելը եւ այդ հարցի վերաբերյալ Մ. Նահանգների դիրքորոշումը հստակեցնելը վստահություն կներշնչեին այդ ջանքերին, որոնք ուղղված են դադարեցնելու ցեղասպանությունը Դարֆուրում»: Բայց վեց ընկերությունների վրա դրված Թուրքիային չվնասելու ճնշումները բավական ուժեղ են:

Թուրք-ամերիկյան համատեղ գործառնություններից մեկը 3 միլիարդ դոլարի պայմանագիրն է՝ ստորագրված «Նորթրոպի» կողմից, որով ընկերությունը պարտավորվում է թուրքական մի ընկերության մատակարարել մարտական ռեակտիվ ինքնաթիռներ: «Գուդրիչ» կորպորացիան եւ թուրքական մի ընկերություն համագործակցում են շարժիչների բաղադրամասերի վերանորոգման եւ պահեստամասերի ապահովման բնագավառում: «BAE սիստեմզը» եւ թուրքական մի ընկերությունը միասին զրահապատ մեքենաներ են մատակարարում թուրքական բանակին: «Շեւրոնը» բաժնետոմսեր ունի երկրով մեկ ձգվող խողովակաշարերում: «Ռեյթեոնը» համաձայնել է Թուրքիային վաճառել «Ստինգեր» տեսակի հրթիռներ արձակող համակարգեր, որոնց արժեքն է 34 միլիոն դոլար: Լոնդոնյան «BAE սիստեմզի» ամերիկյան մասնաճյուղի ներկայացուցիչները պաշտպանել են Թուրքիայի հետ առեւտուրը, ասելով որ Թուրքիան Մ. Նահանգների դաշնակիցն է եւ «առեւտրական կապերը ընդլայնվում են» երկու երկրների միջեւ:

«Ռեյթեոնը» եւ «Գուդրիչը» չցանկացան մեկնաբանել իրենց համագործակցությունը Թուրքիայի հետ:

Հայ ազգային կոմիտեի արեւմտյան շրջանի (Գլենդեյլ, Կալիֆոռնիա) գործադիր տնօրեն Էնդրու Կզիրյանը վճռականորեն նշում է, որ բանաձեւի կողմնակիցները պայքարը չեն դադարեցնելու, եթե նույնիսկ դարձյալ ձախողվի:

«Եթե հստակ ու բարձրաձայն չես նշում, թե ինչ է կատարվել, ապա Դարֆուր ես ձեռք բերում», ասում է նա:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

AZG NEW 4.QXD 6/16/2009 9:32 PM Page 1



# Տարածաշրջանում առանցքային է Սիրիայի դերը

*Դրանով են պայմանավորված Դամասկոսի հետ հարաբերությունները բարելավելու նախագահ Օբամայի ձեռնարկումները*

Հետամուտ լինելով իսլամական աշխարհի նկատմամբ Բուշի վարչակազմի դիրքորոշումը վերանայելու եւ տարածաշրջանում ռազմաքաղաքական լարվածությունը թուլացնելու նախագահ Բարաք Օբամայի առաջադրանքին, պաշտոնական Վաշինգտոնը նախադրյալներ է ստեղծում, որ բարելավի հարաբերությունները Իրանի եւ հատկապես Սիրիայի հետ: Թերեւս այդ առումով պատահական չէին Մերձավոր Արեւելքի գծով նախագահ Օբամայի հատուկ ներկայացուցիչ Ջորջ Միտչելի, ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ջոն Քերրիի եւ կոնգրեսականների այցելությունները Դամասկոս:

Ըստ երեւույթին դրանք ծառայել են նպատակին, որ հունիսի սկզբին Սիրիայի արտգործնախարար Վալեդ ալ Մուալիմի հետ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հեռախոսազրույցից հետո կողմերը որոշեցին ամերիկյան զինվորական եւ դիվանագիտական պատվիրակությունների, այդ թվում նաեւ՝ Միտչելի այցելությունը կազմակերպել Դամասկոս: «**Ազգը**» այդ այցելությունների մասին տեղեկացրել էր դեռեւս հունիսի 5-ին: Ամերիկյան պատվիրակությունների գործուղումը Սիրիա ոչ միայն իրողություն է դարձել, այլեւ՝ այցելությունները գերազանցել են ենթադրությունները:

Ենթադրությունների գերազանցման պարագայում խոսքն ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարտերի Սիրիա այցելության մասին է: Հունիսի 10-ին Դամասկոսում նա հանդիպել է Սիրիայի արտգործնախարար Մուալիմի հետ, իսկ հաջորդ օրը նրան ընդունել է երկրի նախագահ Բաշար Ասադը: Ենթադրվում էր, որ Քարտերը Դամասկոսում հանդիպեր նաեւ Իսլամական դիմադրության շարժման՝ «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալեդ Մաշալին: Համենայն դեպս, նախագահ Ասադի ընդունելությունից հետո Քարտերը հայտարարել է. «Սիրիան տարածաշրջանում առանցքային դերակատար է: Կարծում եմ, ԱՄՆ-ը կզարգացնի հարաբերությունները Սիրիայի հետ»:

Քարտերին հաստատել էր Օբամայի հատուկ ներկայացուցիչ Միտչելը: Հունիսի 13-ին այցելելով Սիրիա, նա առանձնազրույց էր ունեցել նախագահ Ասադի հետ, որի ավարտին հայտարարել էր. «Սիրիայի նախագահի հետ հանդիպմանը, բացի երկկողմ հարաբերություններից, քննարկել ենք տարածաշրջանի առանցքային խնդիրները: Այս նախաձեռնությունից հետո ցանկանում ենք ստեղծել փոխադարձ հարգանքի եւ խաղաղության սկզբունքի վրա հենվող հարաբերություններ, ինչպես նաեւ այս արժեքների շրջանակում երկխոսություն ծավալել: Տարածաշրջանում մնայուն խաղաղության համար կարեւոր է Սիրիայի նշանակությունը»:

Օգտվելով առիթից նշենք, որ Միտչելի այցից մեկ օր առաջ՝ հունիսի 12-ին Դամասկոս է գործուղվել Իրաքում տեղակայված ամերիկյան զորքերի հրամանատարության պատվիրակությունը: Սիրիական «Ալ Վաթան» թերթի վկայությամբ, ամերիկացի հրամանատարները սիրիական կողմից աջակցություն են խնդրել Իրաքում անվտանգության ապահովման առումով, եւ կողմերը միմյանց փոխօգնություն ցուցաբերելու որոշում են կայացրել: Չի բացառվում, որ առաջիկայում վերականգնվի Սիրիայում ԱՄՆ դեսպանության գործունեությունը:

ԱՄՆ-Սիրիա հարաբերությունների բարելավումը կարեւոր է տարածաշրջանի լարվածության թուլացման տեսանկյունից: Բարելավման տեսանկյունից էլ կարեւորը Վաշինգտոնի մերձավորարեւելյան քաղաքականությունը վերանայելու նախագահ Օբամայի դիրքորոշումն է: Թերեւս դա կարելի է պայմանավորել ԱՄՆ նորընտիր նախագահի նախընտրական խոստումներով կամ համարել նրա բարի կամքի դրսեւորումը:

Չպետք է, սակայն, մոռանալ Մերձավոր եւ Միջին Արեւելքում Բուշի վարչակարգի որդեգրած քաղաքականության ձախողման մասին: Այլ կերպ, անկախ նախագահ Օբամայի դիրքորոշումից կամ բարի կամքից, այս ձախողումը Վաշինգտոնին կանգնեցրել է տարածաշրջանային քաղաքականությունը վերանայելու փաստի առջեւ: Դա հատկապես վերաբերում է Վաշինգտոնի սիրիական քաղաքականությանը, քանի որ Սիրիան հակաիրաքյան պատերազմի հետեւանքով տարածաշրջանում ստեղծված շատ բարդ իրավիճակում հայտնվելով հանդերձ միանգամայն անբարենպաստ պայմաններում, հաջողությամբ չեզոքացրել է Արեւմուտքի եւ տարածաշրջանի արեւմտամետ երկրների հարաճուն ճնշումներն ու ԱՄՆ-ի ռազմական ներխուժման սպառնալիքները:

Ավելին, Իրանի հետ սերտ համագործակցության շնորհիվ Սիրիան Իրաքում խթանել է հակաամերիկյան դիմադրությունը: Նա շարունակում է տարածաշրջանում հաջողությամբ մրցակցել Եգիպտոսի եւ Սաուդյան Արաբիայի հետ, ինչպես նաեւ աջակցել Իսրայելի դեմ պայքարող «Հզբոլլահին» եւ «Համասին»: Թեեւ 2005-ին նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո սիրիական զորքերը դուրս են բերվել Լիբանանից, այսինքն՝ վերջ է դրվել Սիրիայի ռազմական ներկայությանը, սակայն փոխարենը երկրում աննախադեպ ուժեղացել են Դամասկոսի աջակցությունը վայելող «Հզբոլլահի» դիրքերը: Առ այսօր Դամասկոսում է ապաստանում «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Մաշալը:

Այս փաստերը վկայում են Լիբանանում եւ Պաղեստինում Սիրիայի «Հզբոլլահով» ու «Համասով» պայմանավորված ազդեցության մասին, որը տարածաշրջանի եւ հատկապես Իսրայելի խաղաղության եւ կայունության առումով առանցքային է դարձնում նրա դերը, իսկ պաշտոնական Վաշինգտոնը հաշվի է նստում այդ դերի հետ: Այլապես ռազմական ներխուժման երկարամյա սպառնալիքներից հետո Օբաման Դամասկոսի հետ հարաբերություններ զարգացնելու դիրքորոշում չէր որդեգրի:

Մինչդեռ ԽՍՀՄ-ի փլուզումը Սիրիային զրկել էր Մոսկվայի ռազմաքաղաքական աջակցությունից: Այս ամենը նշանակում է, որ տարածաշրջանում Սիրիայի առանցքային դերը, հակառակ ենթադրություններին, պայմանավորված չի եղել ԽՍՀՄ-ի աջակցությամբ: Թերեւս այդ առումով հասկանալի է Հենրի Քիսինջերի հանրահայտ հետեւությունը. «Տարածաշրջանում չի կարելի պատերազմը պատկերացնել առանց Եգիպտոսի, իսկ խաղաղությունը՝ առանց Սիրիայի»:

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

# Հալէպի Վերժին Կիւլպենկեան մայրանոցը

2009 թուականին փոխուեցաւ Հալէպի Վերժին Կիւլպենկեան մայրանոցի լիազօր ներկայացուցչութեան կազմը:

Նիւ Եորքի կեդրոնական հիմնարկութեան ներկայացուցիչ Էդուարդ Կիւլպենկեան լիազօր ներկայացուցչութեան պաշտօն յանձնեց հալէպահայ ազգայիններ Յովհաննէս Սիլահեանին, Յակոբ Եթերեանին եւ Սամուէլ Տէտէեանին, որոնք սիրայօժար յանձն առին մայրանոցը ղեկավարելու պարտականութիւնը, համագործակցելով այն բոլոր բժիշկներուն եւ անձնակազմին հետ, որոնք իրենց յօժար կամքով կը գործեն կամ պիտի գործեն մայրանոցին մէջ:

Մայրանոցին պատմութիւնը ծանօթ է մեր հասարակութեան շատ շատերուն սկսեալ բարերարներ Պատրիկ եւ Ներուէս Կիւլպենկեաններէն, որոնք գործակցելով հալէպահայ բժիշկ Խաչիկ Պօղոսեանի հետ, որպէս հայ ազգային անձնաւորութիւններէ կազմուած յանձնախումբի լիազօր ներկայացուցիչ, 1935-ին աւարտելով շէնքի շինարարական աշխատանքները, կը կատարուի շէնքի հանդիսաւոր բացումը:



Շուտով կը լրանայ հաստատութեան բացման 75-ամեակը:

Եթէ այն տարիներուն քաղաքիս հասարակութիւնը խիստ կարիքը կը զգար այդպիսի հիմնարկի մը առկայութեան ու որպէս հազուադէպ կառոյց եւ որպէս մարդոց նիւթական եւ դժուարին պայմաններուն հետ կապուած բուժական բարեսիրական կեդրոն, ապա այսօր եւս այդ հիմնարկը ոչ միայն չէ կորսնցուցած իր առաքելական դերը, այլեւ ընդհակառակը՝ կը համարուի քաղաքիս լաւագոյն կառոյցներէն մէկը:

Այսօր քաղաքիս մէջ բազմացեր են ծննդատուներն ու բոյժ-հիմնարկները. ուրախալի կերպով բարելաւուեր են նաեւ մարդոց կենցաղային եւ նիւթական պայմանները եւ հետեւաբար շատ ու շատ կանայք կը փնտռեն ու կը նախընտրեն ծննդաբերել ու յետծննդաբերական շրջանը անցընել շատ աւելի լաւ, գեղեցիկ ու արդիական լաւագոյն պայմաններ ունեցող հաստատութեան մէջ, որ գոհունակութիւն կը պատճառէ ե՛ւ իրենց, ե՛ւ իրենց ազգականներուն ու այցելուներուն, որ եւ պէտք է համարել շատ բնական եւ օրինաչափ երեւոյթ: Այնուհանդերձ, պէտք է չանտեսենք այն հանգամանքը, որ մարդոց զգալի մէկ մասը դեռ շատ կարիքաւոր է եւ պէտք ունի ե՛ւ նիւթական, ե՛ւ բուժական ու բարոյական սրտաբուխ օգնութեան:

Պէտք է բարձր գնահատել գաղութիս բոլոր բարեսիրական միութիւններուն եւ հիմնարկներուն անժխտելի դերը, որոնք ջանք չեն խնայեր այլազան միջոցներով օգնութեան ձեռք մեկնելու ու խնամելու կարիքաւորը:

Պէտք է նշել, որ մայրանոցի պայմանները նախորդ տարիներուն հետ համեմատած շատ փոխուած են: Ի հարկ է պէտք է ժամանակի հետ քայլ պահել, աւելի ու աւելի լաւացնել, պակսեցնել ու վերացնել եղած թերութիւնները, շինիչ նկատողութիւնները նկատի առնել եւ ընդառաջել, համագործակցութիւնը սերտացնել, հիւանդի առողջական վիճակը բարելաւելու համար ջանք ու եռանդ չխնայել: Այդ բոլորը լիարժէք դարձնելու համար կան բոլոր պայմանները:

Տարիներ առաջ, երբ Սուրիոյ առողջապահական նախարարութենէն բժշկական յանձնախումբ մը կ'այցելէր մայրանոց, այն հարցին, թէ ինչ կարծիքի են տուեալ բոյժ-հիմնարկի մասին, յանձնախումբի ղեկավար Ահմադ Ազիզ պատասխանեց հետեւեալ նախադասութեամբ.

- Դուք բերդ ունիք:

Յուզումէն եւ ուրախութենէն կուրծքս լեցուած խորին շնորհակալութիւն յայտնեցի իրենց մէկ նախադասութեամբ տուած բարձր գնահատականին:

Յաճախ, երբ արտասահմանեան երկիրներ կ'այցելեմ, կը հանդիպիմ մարդոց, որոնցմէ ոմանք կ'ըսեն.

- Ես Հալէպի հայկական մայրանոցին մէջ ծնած եմ, օր մը եթէ առիթը ունենամ, կու գամ կ'այցելեմ ծննդավայրս:

Ու ես ուրախանալով կը կատակեմ.

- Լաւ է որ կեանք մտեր ես մայրանոցէն, բայց կեանքիդ հրաժեշտ չտաս ծերանոցէն...

Հիմա առաջուան նման հատ ու կենտ չեն բժիշկները, շատցեր են այնքան, որ մայրացած կամ մայրանալու թեկնածու կինը իր բժիշկը որոշելու եւ ընտրելու լայն հնարաւորութիւն ունի եւ կ'ընտրէ այն բժիշկը, որուն նկատմամբ տրամադրուած է վստահութեամբ եւ հոգեկան հանգստութեամբ: Իսկ բժիշկը եթէ իր ժամանակը, ջանքն ու եռանդը չխնայէ իր ծննդաբերին կամ հիւանդին առողջական վիճակը բարելաւելու, հոգեկանը բարձր պահելու, այդ պարագային անիկա հիւանդին համար կը դառնայ անփոխարինելի եւ պաշտուելու արժանի անձ:

Պէտք չէ թաքցնել եւ կամ ցաւով պէտք է նշել այն հանգամանքը, որ կարգ մը բժիշկներ իրենց մարդասիրական առաքելութիւնը կատարելէ առաջ առաջնային նպատակը կ'ըլլայ նիւթական շահի ապահովելը, կամ տեղի-անտեղի կը դիմեն վիրաբուժական միջամտութեան, նիւթական շահի հետ մէկտեղ ձեռք բերելու մասնագիտական փորձառութիւն եւ աժան հեղինակութիւն:

Բժիշկ գիտնականներէն մէկը ժամանակին անտեղի չէ ըսած, որ բժշկական նշանը պէտք է ըլլար ոչ թէ օձը, այլ վառուող մոմը, այսինքն վառելով ու հալելով լուսաւորէ շրջապատը:

Մայրանոցի նոր լիազօրներուն կը մաղթենք ոյժ, կորով, առողջութիւն, սիրայօժար գործունէութիւն, յաջողութիւններ, հաւատալով, որ հաճոյքով ու նուիրումով կ'արդարացնեն իրենց վրայ դրուած եւ վստահուած Վ. Կիւլպենկեան մայրանոցի, բոյժ-հիմնարկի ղեկավարման պատուաբեր պարտականութիւնը:

**Բժիշկ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ**
**Բժշկական գիտութիւններու թեկնածու**
**Հալէպ**

AZG NEW 5.QXD 6/16/2009 9:32 PM Page 1



# Ռուսական վետո՝ Վրաստանում ՄԱԿ-ի առաքելության նկատմամբ

## *Վրաց ոստիկանությունը ծեծում է ընդդիմադիրներին, լրագրողներին, ոմանց ձերբակալում*

Վրաստանից դուրս եւ Վրաստանի ներսում ու հարեւանությամբ իրադրությունը գնալով ավելի է սրվում: Այն ժամանակ, երբ արտաքին աշխարհում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մակարդակով քննարկվում է Վրաստանում այդ կազմակերպության առաքելության գործունեության հարցը, Վրաստանի ներսում ընդդիմության հետ բախումները առավել լուրջ տեսք ու բովանդակություն են ստանում:

Նախ՝ արտաքին իրողությունների մասին:

Աբխազիայում ՄԱԿ-ի դիտարկման առաքելությունը կարող է իսկապես դադարեցվել, եթե երեք ամսվա ընթացքում որեւէ այլ բան չնախաձեռնվի: Օրերս ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նիստում Ռուսաստանը վետո է դրել Աբխազիայում, Կոդորի կիրճում եւ Թբիլիսիում գործող ՄԱԿ-ի առաքելության մանդատի ժամկետը երկարացնելու հարցով բանաձեւի նախագծի վրա:

Ռուսաստանյան լրատվամիջոցների փոխանցմամբ, այդօրինակ քայլը նշանակում է, որ ՄԱԿ-ի դիտորդները դադարեցնում են իրենց աշխատանքը վրաց-աբխազական սահմանին, քանի որ նրանց լիազորությունների ժամկետը լրացավ երեկ, վաղ առավոտյան ու առաքելության ժամկետը երկարաձգված չլինելու պատճառով պետք է դադարեցվի:

Ռուսաստանի հիմնական դժգոհությունը կապված էր «բանաձեւի նախագծում տարածաշրջանում ժամանակակից քաղաքական իրադրությունը հաշվի չառնելու հետ»: Նիստի ընթացքում երկար քննարկումների ու տարբեր ձեւակերպումների դիտարկումից հետո ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Բրիտանիան եւ էլի 5 երկրներ առաջարկել են երկարաձգել ՄԱԿ-ի առաքելության մանդատը, բայց այնպիսի ձեւակերպումներով, թե աբխազական տարածաշրջանում ոչինչ չի փոխվել, չի եղել Ռուսաստանի կողմից Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախության ճանաչման որոշումը:

Արեւմտյան երկրները կրկին ընդգծել են Վրաստանի տարածքային ամբողջականության պահը ու բանաձեւի նախագիծը դրել քվեարկության, եւ քանի որ Ռուսաստանը առաջարկել է հանել հղումները տարածքային ամբողջականությանը, ինչը չի արվել, օգտագործել է վետոյի իրավունքը:

ՄԱԿ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինի ներկայացմամբ, ռուսաստանյան պատվիրակությունը պատրաստակամություն է հայտնել ՄԱԿ-ի առաքելության նոր տեխնիկական երկարաձգման հարցում, միանգամից մեկ ամսով, մինչեւ կավարտվեն սկսված քննարկումները: «Մեր գործընկերները, սակայն, նախընտրեցին թույնը դեղամիջոցից, ինչի առնչությամբ կարելի է միայն ափսոսանք հայտնել», հայտարարել է Չուրկինը, բացատրությամբ, որ Ռուսաստանի պատրաստակամությունը չի ողջունվել, այլ դարձել է քաղաքական շահարկումների առարկա, ուստի մնացել է վետոյի օգտագործումը:

Ռուսաստանը դեմ է քվեարկել Վրաստանի տարածքային ամբողջականությանը հղում անող բանաձեւի նախագծին այն դեպքում, երբ 10 կողմ է ստացվել, 4 ձեռնպահ, սակայն վետոյի իրավունքի պատճառով բանաձեւը չի ընդունվել՝ դադարեցնելու պարտադրանքի առաջ կանգնեցնելով ՄԱԿ-ի առաքելությունը աբխազ-վրացական սահմանում:

«Արեւմուտքը հաշվի չի առնում նոր իրողությունները: Սաակաշվիլին Ցխինվալի վրա հարձակմամբ խաչ քաշեց իր երկրի տարածքային ամբողջականության վրա: Բայց գոնե մեկը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որեւէ նիստում դատապարտեր Վրաստանի ագրեսիան ընդդեմ Հարավային Օսիայի... Այս նիստում որեւէ մեկն այդ մասին անգամ չհիշատակեց», վետո կիրառելու Ռուսաստանի մոտեցումը այսպես է բացատրել ՄԱԿ-ում այդ երկրի մշտական ներկայացուցիչը:

Առավել հետաքրքրական է, որ վրաց-աբխազական սահմանի դիտարկումը, ըստ էության, ՄԱԿ-ի առաքելության դադարեցումից հետո մնում է Ռուսաստանի եւ Վրաստանի ուսերին: Ռուսաստանը, արդեն իսկ ստորագրված երկկողմ համաձայնագրերով «կապահովի» իրավիճակի դիտարկումը աբխազական կողմից այն դեպքում, երբ վրացական կողմից ամենայն հավանականությամբ այդ գործը կիրականացնեն արեւմտյան երկրները:

Ամեն դեպքում, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունն արդեն հանձնարարել է Վրաստանում իր ներկայացուցիչ Յոհան Վերբեկին միջոցներ ձեռնարկել ՄԱԿ-ի դիտորդական առաքելության աշխատանքները Վրաստանում դադարեցնելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է Վրաստանի ներքին կյանքին, ապա այստեղ հանդարտությունը վերջին մի քանի ամիսներին թերեւս ամենացանկալի երեւույթն է, որ այդպես էլ մնում է անհասանելի: Վրաց իշխանությունները ու ընդդիմությունը գնալով ավելի շատ բախումներ են ունենում, ավելի դժվարանում երկխոսություն կազմակերպելու գործում: Ավելի մեծ թվով ընդդիմադիր ակտիվիստներ են ձերբակալվում, ընդդիմությունն էլ արդեն բարձրաձայնում է «քաղաքացիական անհնազանդության մասին»:

Հունիսի 15-ին հերթական անգամ բախում է տեղի ունեցել վրաց ընդդիմադիր ակտիվիստների ու ոստիկանության միջեւ, ձերբակալվել է 39 ակտիվիստ, որոնցից 5-ին 30 օր կալանք է սահմանվել, մյուսներին՝ 400-ական լարի (մոտ 280 դոլար) տուգանք:

Վրացական ոստիկանության ներկայացմամբ, ցուցարարներին ցրելու փորձ չի արվել, այլ ոստիկանությունը ակտիվ գործողությունների է դիմել, երբ հունիսի 15-ին ոստիկանության շենքի մոտ հավաքվածների մեջ «նկատել են հունիսի 12-ին խորհրդարանի մոտ տեղի ունեցած միջադեպի (վրացի ընդդիմադիր ակտիվիստները հարձակվել էին պատգամավորների վրա ու ծեծկռտուք սարքել - Ա.Հ.) երեք մասնակցի»: Հենց այդ երեքին էլ ոստիկանությունը փորձել է ձերբակալել, սակայն ցուցարարները թույլ չեն տվել, ստացվել է բախում:

Այս բացատրությամբ, սակայն, վրացական ոստիկանությունը հակասում է ինքն իրեն, քանի որ հունիսի 15-ի միջադեպից անմիջապես հետո ՆԳՆ-ի տարածած հայտարարությամբ պարզաբանվում էր, թե ընդդիմության ներկայացուցիչները փակել են ոստիկանության շենք տանող ճանապարհը, ոստիկանությունը փորձել է ազատել ճանապարհը, որի ժամանակ էլ ցուցարարները ֆիզիկական դիմադրություն են ցուցաբերել:

Վրացական Civil.ge կայքէջը տեղեկացնում է, որ ականատեսների վկայությամբ էլ ճանապարհ չի փակվել: Մինչդեռ ոստիկանությունը խլել է լրագրողների տեսախցիկները, ծեծի են ենթարկվել European Pressphoto Agency, Gevision.tv լրատվամիջոցների, նաեւ «Մաեստրո» եւ «Կավկասիա» հեռուստաընկերությունների ներկայացուցիչները: Երկու հեռուստաընկերությունները, որպես բողոքի ակցիա, որոշ ժամանակով դադարեցրել են հեռարձակումը:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ

# Շանհայի կազմակերպության գագաթաժողովը ընդունեց հակաահաբեկչական կոնվենցիա

**Ռուսաստանի Եկատերինբուրգ քաղաքում երեկ պաշտոնապես բացվել է Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գագաթաժողովը պետությունների ղեկավարների մասնակցությամբ: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:**

**Ներկայումս կազմակերպության նախագահը Ռուսաստանն է: Գագաթաժողովի ավարտից հետո նախագահությունը կփոխանցվի Ուզբեկստանին:**

**Կազմակերպության անդամ երկրներն են Չինաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը եւ Ուզբեկստանը: Այդ պետությունների ղեկավարներից բացի, գագաթաժողովին որպես դիտորդներ մասնակցում են Պակիստանի եւ Իրանի նախագահները, ինչպես նաեւ Հնդկաստանի վարչապետ Մանմոհան Սինգհը եւ Մոնղոլիայի փոխվարչապետ Նորովին Ալթանհույագը:**

**Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պետք է Եկատերինբուրգ ժամաներ հունիսի 15-ին, բայց ժամանեց երեկ առավոտյան: Պատճառը Իրանի նախագահական ընտրություններից հետո երկրում ծայր առած անկարգություններն են:**



**Հանդիպման նախօրեին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի օգնական Սերգեյ Պրիխոդկոն լրագրողներին հայտնել էր, որ գագաթաժողովում կքննարկվեն միջազգային համագործակցության ընդլայնման հարցեր, որպեսզի ՇՀԿ-ն «ստանա նոր որակ եւ դինամիկա»:**

**Գագաթաժողովի ավարտից հետո ընդունվել է հակաահաբեկչական կոնվենցիա: Որոշված է անցկացնել համատեղ հակաահաբեկչական զորավարժանքներ:**

**ՉԺՀ նախագահ Հու Ցզինտաոն հայտարարել է, որ Չինաստանը ՇՀԿ երկրներին կհատկացնի 10 մլրդ դոլարանոց «հակաճգնաժամային» վարկ:**

**Նաեւ որոշվել է Բելառուսին եւ Շրի Լանկային տալ ՇՀԿ երկխոսության գծով գործընկերների կարգավիճակ:**

# Թեհրանում կան սպանվածներ

**Երեկ գիշեր Թեհրանում 7 մարդ է գնդակահարվել, երբ հարձակման փորձ է արվել Ազադի հրապարակի մերձակա զինվորական պահակակետի վրա, մինչ հրապարակում ընդդիմության հանրահավաք էր անցկացվում: Դրա մասնակիցները բողոքում էին հունիսի 12-ի նախագահական ընտրությունների արդյունքների դեմ: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, կա նաեւ մի քանի վիրավոր: Սա առաջին դեպքն է, երբ մարդիկ են զոհվում բողոքի ձեռնարկումների ժամանակ, պաշտոնապես պնդում է Իրանի ռադիոն:**

**Ֆրանսպրեսի տվյալներով, հարձակվողները փորձել են վնաս պատճառել պետական ունեցվածքին: Քննչական մարմինները չեն հաստատել հարձակվողների կապը բողոքի հանրահավաքի մասնակիցների հետ: Թեհրանի արտակարգ ծառայությունների տվյալները վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է 8 սպանվածների մասին:**

**Ռոյթեր գործակալությունը հաղորդում է հայտնի ընդդիմադիր գործիչ, բարեփոխական Մոհամմեդ Ալի Աբթահիի ձերբակալության մասին: Նա 2001-2004 թթ. նախագահի տեղակալն է եղել խորհրդարանական հարցերի գծով:**

**«Ազգն» արդեն գրել է ընտրություններում Իրանի գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադի վերընտրության եւ նրա գլխավոր ախոյան՝ նախկին վարչապետ Միր Հոսեյն Մուսավիի կողմնակիցների բողոքի ցույցերի մասին: Ընդդիմությունը պնդում է, թե նախագահական ընտրությունների արդյունքները կեղծված են: Բախումների ընթացքում ոստիկանությունը ցուցարարների դեմ գործի է դնում մահակներ, արցունքաբեր գազի նռնակներ:**

# Բանդիտ են՝ քիչ չէ, հետն էլ հայ են

Ռուսաստանի գլխավոր դատախազության հայտարարությամբ, շուտով Մոսկվայի քաղաքային դատարանում կսկսվի մի դատավարություն, որն ամենայն հավանականությամբ կբորբոքի հակակովկասյան, մասնավորապես հակահայկական տրամադրություններ: Խոսքը վերաբերում է ՌԴ Մագադանի նահանգապետ Վալենտին Ցվետկովի սպանությանը, որն իրագործվել է 2002 թվականի հոկտեմբերի 18-ին Մոսկվայի ամենաբանուկ փողոցներից մեկում՝ Նովի Արբատում, օրը ցերեկով: Սպանության կազմակերպման մեջ մեղադրվում են չորս հոգի, որոնցից երկուսը հայ են՝ Մարտին Բաբաքյոխյանը եւ Մասիս Ախունցը, երրորդն էլ՝ Արթուր Անիսիմովը, երեւանցի է (գուցե սա էլ է հայ, հայտնի չէ): Չորրորդը երեւի ռուս է՝ Ալեքսանդր Զախարով:

Դեռ դատավարությունը չսկսված, ռուսական լրատվամիջոցները, մեկնաբանելով փաստը, շռայլորեն հոլովում են հայ, Հայաստան, Հայաստանի ծնունդ, Երեւան եւ մեզ քաջ ծանոթ նման այլ բառեր ու արտահայտություններ: Անշուշտ բանդիտից սպասել, որ նման արարք գործելուց առաջ մտածեր իր ժողովրդի հեղինակության մասին, անմտություն է: Ապշեցնում է սրանց մտքի կարճությունը. միթե պարզ չէր, որ նման մակարդակի բարձրաստիճան պաշտոնյայի սպանությունը երբեք չի կարող անուշադրության մատնվել եւ իրավապահ մարմիններն ամեն ինչ կանեն բացահայտելու եւ մեղավորներին խստագույնս պատժելու համար:

Սպանության գլխավոր կազմակերպիչը համարվում է Անիսիմովը: Բաբաքյոխյանը եւ Ախունցը անմիջականորեն հետեւել են կիլերի գործողություններին (ի դեպ, վերջինս արդեն ոչնչացված է): Անիսիմովը եղեռնագործությունը իրականացնելուց հետո ճողոպրել է «հայրենի» Երեւան եւ այստեղ էլ կալանավորվել տեղի իրավապահ մարմինների կողմից ու արտահանձնվել Ռուսաստանին: Բաբաքյոխյանը կեղծ փաստաթղթերով բույն է դրել Իսպանիայում, սակայն դա էլ նրան չի փրկել: Ախունցին հայտնաբերել են Վլադիվոստոկում:

Սպանության շարժառիթները կապված են բիզնեսի հետ: Եթե դատարանն ընդունի մեղադրական վճիռ առաջադրված հոդվածով, ապա բոլոր չորսին սպասում է ցմահ բանտարկություն:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Մաֆիան նախազգուշացրել է իտալացի նախարարին

**Իտալիայի արդարադատության նախարար Անջելինո Ալֆանոն եւ նրա տեղակալ Ռոբերտո Պիչիտելլոն ստացել են անանուն ծանրոցներ՝ փամփուշտներով եւ սպառնալիքներով: Այդ մասին հաղորդում է իտալական ANSA լրատվական գործակալությունը:**

**Անհայտ անձինք նախարարից պահանջում են իտալական բանտերի այցելության սենյակներում չտեղադրել այցելուներին բանտարկյալներից բաժանող թափանցիկ միջնորմներ:**

**Իտալիայի ոստիկանության նախկին քննիչ Ռոբերտո Պիչիտելլոյի ստացած ծրարի մեջ եղել է նամակ, որով պահանջվում է ներգործել նախարար Ալֆանոյի վրա:**



**ՌԻԱ գործակալությունը ենթադրում է, թե անհայտ անձինք փորձում են սպառնալիքների միջոցով խոնչընդոտել Իտալիայի խորհրդարանում մաֆիայի դեմ պայքարի նոր միջոցների ձեռնարկմանը: Ներկայումս խորհրդարանում քննարկվող օրինագծում առաջարկվում է խստացնել մաֆիայի եւ կազմակերպված հանցախմբերի բանտարկության պայմանները:**

AZG NEW 6.QXD 6/16/2009 9:32 PM Page 1



# «Կիլիկիան» անվերադարձ կորցնելու վտանգն իրական է

## Մտահոգված է նաեւ Անդրեյ Մակարեւիչը



1998 թվականին առաջին անգամ Նոր փորձարարական արվեստի կենտրոնում բացված ցուցահանդեսում տեղեկացա, որ կա երիտասարդների մի խումբ՝ ոգեւորված հայոց նավատորմի հարուստ պատմությունը գործնականում ներկայացնելու երազանք-գաղափարով: Ցուցանմուշները նավի փայտե մասեր էին ու Կիլիկյան Հայաստանի ծովային քարտեզներ՝ շքեղ տպագրությամբ: «Այաս» ծովային ուսումնասիրությունների ակումբը, որ երազանք - գաղափարը կրող երիտասարդները հիմնեցին, նախ ուսումնասիրել էր Կիլիկյան Հայաստանի ծովային քարտեզները, նավագնացությանն ու նավաշինությանն առնչվող արխիվային նյութերը եւ ապա գիտական ամբողջական հիմքով նախաձեռնել «Կիլիկիա» առեւտրային առագաստանավի կառուցումը: Սկզբում միայնակ կառուցում էին նավը, հետո շատերը միացան ու տեր կանգնեցին նրանց երազանք-գաղափարին: «Կիլիկիան» կառուցեցին 11 տարում՝ հետեւողական ջանքերի ու միասնության շնորհիվ եւ այն ոգեւորության, որ ծնվել էր մի քանի երիտասարդների հոգում:

Եվ «Կիլիկիան» անցավ հին ճանապարհներով: 2004 թվականի հուլիսի 7-ին սկիզբ առած եւ երկու տարի տեւած ծովագնացության ընթացքում եղավ 25 երկրների 62 նավահանգիստներում՝ Հայաստանի դրոշի ներքո, անհամար մարդիկ ճանաչեցին մեր երկիրը նաեւ նրա ծովագնացության պատմական հնարավորություններին տեղեկանալով: Միասնականության խորհրդանիշ ընկալվեց ու գնահատվեց «Կիլիկիան»:

Ծովագնացության ավարտից հետո այն, սակայն, արդեն երեք տարի արեւի ու անձրեւի հանդեպ անպաշտպան է, չնայած առագաստանավի ստեղծման միակ նպատակն ու գործադրումը ծովագնացությունն իրականացնելը չէր: «Այասում» վստահ են, որ «Կիլիկիան» հայոց նավագնացության պատմության հիանալի թանգարան կարող է լինել համապատասխան տարածքի դեպքում:

«Առագաստանավի երեք տարվա անպաշտպանությունը ի վերջո այսօր բերել է այն անվերադարձ կորցնելու վտանգին, որը շատ իրական է: Այսօր բոլոր նրանք, ովքեր չեն մոռացել երկու տարվա համահայկական ոգեւորությունը «Կիլիկիայի» ծովագնացությամբ ստեղծված, փորձում են հնարավորն անել այն փրկելու համար», տեղեկացրեց «Կիլիկիայի» նավապետ **Կարեն Բալայանը**:

Այն ուսումնասիրությունները, որոնք դարձան «Կիլիկիայի» ստեղծման պատմական, գիտական, տեխնիկական հիմքը, հայոց նավատորմի, նավագնացության պատմության մասնիկն են միայն ու վստահաբար կարելի է պնդել, որ ուսումնասիրություններն ամբողջացնելը մի քանի տեսանկյուններից շահեկան է: Այսպես են կարծում Կարեն Բալայանից ու «Այասի» մյուս ներկայացուցիչներից բացի շատ շատերը, ընդ որում անկախ ազգային պատկանելությունից:

Հապացույց ասվածի Կարեն Բալայանը տեղեկացրեց. «Հունիսի 20-ին Երեւան կայցելի լեգենդար ռոք-երաժիշտ Անդրեյ Մակարեւիչը, որը անտարբեր չէ «Կիլիկիայի» ճակատագրի հանդեպ եւ հենց նավի վրա էլ տեղի կունենա նրա ստեղծագործական երեկոն՝ հօգուտ «Կիլիկիայի» պահպանման»:

**ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

# Արցախցի նկարիչների գործերի ցուցահանդես Երեւանում

Երեկ Հայաստանի նկարիչների միությունում տեղի ունեցավ արցախցի նկարիչների գեղանկարների եւ քանդակների ցուցահանդեսի հանդիսավոր բացումը: Հանդիսությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանը, Արցախի ԱԺ նախագահի Աշոտ Ղուլյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ այլ պաշտոնատար անձինք, հյուրեր: ՀՆՄ նախագահ **Կարեն Աղամյանը** ներկայացնելով արցախցի 34 եւ ծնունդով արցախցի, բայց երեւանաբնակ նկարիչների 100-ից ավելի գեղանկարչական ու 15 փայտե քանդակներ՝ նշեց, որ սերտ կապերի մեջ են Արցախի նկարիչների միության հետ, հաճախ էլ նրանք մեկ կամ երկու աշխատանքներով մասնակցում են թեմատիկ ցուցահանդեսներին:

**«Ազգը»** զրուցեց Արցախի նկարիչների միության նախագահ **Լեոնարդ Զաքարյանի** հետ: Վերջինս տեղեկացրեց, որ «սրահում ներկայացված կտավների հեղինակներից 9 նաեւ Հայաստանի նկարիչների միության անդամ են ու այս տեսակ ցուցահանդես, որին միայն արցախցի նկարիչներն են մասնակցում, առաջին անգամ է կազմակերպվում: 2004-ին, 2006-ին արդեն եղել են առանձին ցուցահանդեսներ՝ Հայաստանում Արցախի օրերի շրջանակներում: Եղան պայմանավորվածություններ հետագայում բոլոր արցախցի նկարիչների գործերը մեկտեղելու եւ ներկայացնելու շուրջը»:

ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** բարձր գնահատելով ավանդական դարձած ցուցահանդեսը, նշեց, որ այն կարեւոր դեր ու նշանակություն ունի արցախցի արվեստագետների համար:

Ցուցահանդեսը կտեւի մինչեւ հուլիսի 5-ը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հայտնի են դարձել ավարտական փուլ հասած սցենարիստները

Լոս Անջելեսում հայտնի են դարձել երկրորդ անգամ անցկացվող «Լիլիան եւ Վառնում Պոլ 2009» ֆիլմերի սցենարների մրցանակաբաշխության ավարտական փուլ հասած հեղինակների անունները: Ըստ «Հայկական դրամատիկական արվեստների դաշինքից» (ՀԴԱԴ) ստացված մամլո հաղորդագրության, թեժ մրցակցությունը շարունակվելու է սցենարիստներ Էրիկ Նազարյանի («Երաժշտություն օտարների համար», ԱՄՆ), Լեւոն Մինասյանի («Մոսկվիչ, իմ սեր», Ֆրանսիա) եւ Դավիթ Դերանյանի ու Էնթոնի Զանոնթյանի («Բետուինը», ԱՄՆ) միջեւ:

Այժմ նրանց ներկայացրած սցենարները գնահատելու է պատվավոր ժյուրին, որի կազմում են Ատոմ Էգոյանը, Սթիվ Վեգները (պրոդյուսեր եւ «Ալկոն էնթրթեյնմընթի» զարգացման գծով փոխնախագահ) եւ Մայքլ Պերեցյանը (ռեժիսոր):

Վերջնական արդյունքները հայտարարվելու են օգոստոսի 28-30-ը Լոս Անջելեսում կայանալիք պաշտոնական արարողության ընթացքում, որտեղ 10 հազար դոլարի մրցանակը հանձնվելու է հաղթողին: Ցուցադրվելու է նաեւ հայտնի հայ մի կինոգործչի նոր ֆիլմը: Մուտքը հրավիրատոմսերով:

ՀԴԱԴ-ը նոր տաղանդներ հայտնաբերող եւ նրանց ստեղծագործությունները խթանող կազմակերպություն է, որը նպատակ ունի հայկական թեմաները հնչեցնել աշխարհով մեկ: Այս տարվա մրցանակաբաշխությանը բարձրարժեք գործեր ներկայացվել են Եվրոպայից, Հայաստանից եւ Մ. Նահանգներից, ինչը դժվարացրել է 8 հոգուց բաղկացած առաջին փուլի ժյուրիի պրոֆեսիոնալ անդամների ճիշտ ընտրություն կատարելը:

Բացի վերոնշյալ մրցանակաբաշխությունից ՀԴԱԴ-ը նաեւ անցկացնում է Վիլյամ Սարոյանի անվան սցենարների մրցույթ, որի վերջնաժամկետը 2010 թվի փետրվարի 15-ն է: Հավելյալ տեղեկությունների համար այցելել www.armeniandrama.org կայքը:

Հ. Ծ.


# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին.*

**Կրտսեր պաշտոններ / բաց մրցույթ /**

**1. Տաշիրի տարածքային հարկային տեսչության առաջատար մասնագետ-իրավաբան 1 հաստիքային միավոր**

**2. Արմավիրի տարածքային հարկային տեսչության առաջատար մասնագետ-իրավաբան 1 հաստիքային միավոր**

1-ից 2-րդ կետերում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները մասնակցում են օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի գույքի բռնագանձման կամ սնանկացման հայցերի նախապատրաստմանը, բռնագանձման կատարողական վարույթում մասնակցում են գույքի արգելադրմանը: Իրականացնում են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթ /իրավաբանական կրթությունը պարտադիր է/:

**3. Վանաձորի տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ 2 հաստիքային միավոր**

**4. Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ 2 հաստիքային միավոր**

**5. Գյումրու տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ 3 հաստիքային միավոր**

**6. Հրազդանի տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ - 1 հաստիքային միավոր**

**7. Արմավիրի տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ 3 հաստիքային միավոր**

**8. Արարատի տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**9. Կոտայքի տարածքային հարկային տեսչության Գանձումների բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

3-ից 9-րդ կետերում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները ապահովում են չկատարված հարկային պարտավորությունների գանձումը, հսկում են հարկ վճարողի կողմից դրանց ճիշտ եւ ժամանակին կատարումը: Նախապատրաստում եւ ապահովում են չկատարված հարկային պարտավորությունների բռնագանձման գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթերը:

**10. Տաշիրի տարածքային հարկային տեսչության Վերահսկողության բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**11. Կոտայքի տարածքային հարկային տեսչության Վերահսկողության բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**12. Էջմիածնի տարածքային հարկային տեսչության Վերահսկողության բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**13. Կապանի տարածքային հարկային տեսչության Վերահսկողության եւ գանձումների բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**14. Սիսիանի տարածքային հարկային տեսչության Վերահսկողության եւ գանձումների բաժնի հարկային տեսուչ -1 հաստիքային միավոր**

**15. Նոյեմբերյանի տարածքային հարկային տեսչության Վերահսկողության եւ գանձումների բաժնի հարկային տեսուչ - 1 հաստիքային միավոր**

10-ից 15-րդ կետերում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները իրականացնում են հարկ վճարողների ֆինանսական գործունեության վերլուծություն, նրանց կողմից հարկային օրենսդրության պահանջների ճիշտ եւ ժամանակին կատարման, հարկային հաշվարկների եւ փաստաթղթերի ճշտության հսկողություն:

**16. Արաբկիրի հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ 1 հասիտֆային միավոր**

**17. Վանաձորի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ 2 հաստիքային միավոր**

**18. Սիսիանի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**19. Իջեւանի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ - 1 հաստիքային միավոր**

**20. Նոյեմբերյանի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ - 1 հաստիքային միավոր**

**21. Էջմիածնի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**22. Չարենցավանի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**23. Կոտայքի տարածքային հարկային տեսչության Սոցիալական վճարների եւ եկամտահարկի բաժնի հարկային տեսուչ 2 հաստիքային միավոր**

16-ից 23-րդ կետերում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները իրականացնում են ապահովադիրների կողմից սոցիալական վճարների եւ եկամտահարկի հաշվարկման ու վճարման ճշտության ընթացիկ հսկողություն: Աշխատանքներ են տանում սոց.վճարների եւ եկամտահարկի գծով չկատարված պարտավորությունների գանձման /վճարման/ ուղղությամբ:

**24. Էջմիածնի տարածքային հարկային տեսչության Տվյալների մշակման եւ հաշվառման բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**25. Էջմիածնի տարածքային հարկային տեսչության Տվյալների մշակման եւ հաշվառման բաժնի 1-ին կարգի մասնագետ 2 հաստիքային միավոր**

**26. Արտաշատի տարածքային հարկային տեսչության Տվյալների մշակման եւ հաշվառման բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**27. Արմավիրի տարածքային հարկային տեսչության Հարկ վճարողների սպասարկման, տվյալների մշակման եւ հաշվառման բաժնի 1-ին կարգի մասնագետ 1 հաստիքային միավոր**

**28. Նոյեմբերյանի տարածքային հարկային տեսչության Հարկ վճարողների սպասարկման,տվյալների մշակման եւ հաշվառման բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

**29.Տաշիրի տարածքային հարկային տեսչության Հարկ վճարողների սպասարկման, տվյալների մշակման եւ հաշվառման բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

24-րդ 29-րդ կետերում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները վարում են հարկ վճարողի հարկային պարտավորությունների հաշվառման քարտերը, համակարգիչ են մուտքագրում հարկային հաշվարկների, վճարումների եւ հարկ վճարողների վերաբերյալ այլ փաստաթղթերի տվյալները:

**30. Էջմիածնի տարածքային հարկային տեսչության Հարկ վճարողների սպասարկման բաժնի հարկային տեսուչ 1 հաստիքային միավոր**

30-րդ կետում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցը իրականացնում է հարկային հաշվառում եւ հարկ վճարողների իրազեկում: Ընդունում եւ վերլուծում է հարկերի հաշվարկները, հաշվետվությունները եւ հարկային հաշվառման այլ փաստաթղթերը:

**31. Հրազդանի տարածքային հարկային տեսչության Հարկ վճարողների սպասարկման բաժնի 1-ին կարգի մասնագետ /հարկային գործերի պատասխանատու/ 1 հաստիքային միավոր**

31-րդ կետում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցը իրականացնում է հարկ վճարողների հարկային գործերի հաշվառում: Պատասխանատու է դրանց պահպանման համար:

**32. Օպերատիվ-հետախուզության վարչության Գորիսի բաժնի օպերլիազոր 1 հաստիքային միավոր**

**33. Օպերատիվ-հետախուզության վարչության Հրազդանի բաժնի օպերլիազոր 1 հաստիքային միավոր**

32-րդ 33-րդ կետերում նշված պաշտոնը զբաղեցնող աշխատակիցները իրականացնում են հարկային իրավախախտումների եւ հանցագործությունների կանխման, խափանման եւ բացահայտման աշխատանքներ: Օրենքով նախատեսված կարգով իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կազմում են հայտնաբերված հարկային հանցագործությունների վերաբերյալ նյութեր:

**Հարկային ծառայության կրտսեր պաշտոնները համալրելու համար կազմակերպվող բաց մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները եւ ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի «Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2167-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նախատեսված մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն /պետական կամ արտոնագրված ԲՈՒՀ-ի/ ունեցող, հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիները:**

**Առաջատար պաշտոններ /փակ մրցույթ/**

**1. Էրեբունու հարկային տեսչության Վերահսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ- 1 հաստիքային միավոր**

Իրականացնում է հարկ վճարողների ֆինանսական գործունեության վերլուծություն, նրանց կողմից հարկային օրենսդրության պահանջների ճիշտ եւ ժամանակին կատարմանը, հարկային հաշվարկների եւ փաստաթղթերի ճշտության հսկողություն:

**Հարկային ծառայության առաջատար պաշտոնները համալրելու համար կազմակերպվող փակ մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները եւ ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի «Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 2167-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նախատեսված մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն /պետական կամ արտոնագրված ԲՈՒՀ-ի/ ունեցող, հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիները, որոնք ունեն ֆինանսական,բանկային, մաքսային մարմիններում, ֆինանսավարկային կազմակերպություններում,պետականկառավարման /տեղական ինքնակառավարման/ մարմինների ֆինանսական ծառայություններում,գիտական,բարձրագույն ուսումնական հաստատություններում առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:**

**Դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝**

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների) եւ աշխատանքային գրքույկի պատճենները՝ մասնագիտական վերապատրաստման վկայականներ եւ հավաստագրեր
- արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկ կամ դրան փոխարինող փաստաթուղթ
- երկու գունավոր լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի:
- հայտարարություն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:**

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 1000-ից մինչեւ 1300 ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:**

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 02.07.2009թ. ժամը 1300:**

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ մրցութային հանձնաժողով / Երեւան, Մ.Խորենացի փողոց շ.7, հեռ. 59-46-30, 59-46-32, 59-46-27 /:

Մրցույթը կանցկացվի 17.07.2009թ. ժամը 0930, Արաբկիրի հարկային տեսչության շենքում՝ ք.Երեւան, Կոմիտաս 35:

Մրցույթի անցկացման վայրի, օրվա եւ ժամի հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ կիրառարակվի մամուլում ՝ մրցույթից առնվազն երկու շաբաթ առաջ:

Մրցույթի հարցաշարը կտրամադրվի ՀՀ ԿԱ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչությունում:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողով**

AZG NEW 7.QXD 6/16/2009 10:10 PM Page 1







# Հայկական շախմատի աստղաբույլի ամենավառ աստղը

## *Այսօր լրանում է աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի ծննդյան 80-ամյակը*

80 տարի առաջ՝ 1929-ի հունիսի 17-ին Թբիլիսիում, արհեստավորի ընտանիքում ծնվեց հայ ազգի տաղանդաշատ ներկայացուցիչներից մեկը՝ Տիգրան Վարդանի Պետրոսյանը: Այն ժամանակ ոչ ոք չէր էլ կարող պատկերացնել, որ նորածինը դառնալու է համաշխարհային շախմատի վառ անհատականություններից մեկը, աչքի է ընկնելու իր ուրույն խաղաոճով, գերելու է միլիոնավոր շախմատասերների սրտերը՝ նվաճելով շախմատային թագը, հայ ազգը ներկայացնելու է աշխարհին, ճանաչել է տալու Հայաստանը՝ փառք ու պատիվ բերելով իր ժողովրդին:



Պետրոսյան-Բոտվիննիկ աշխարհի առաջնության մրցախաղի ժամանակ

Տիգրան Պետրոսյանը հայազգի գրոսմայստերների աստղաբույլի ամենավառ եւ առաջին աստղն էր: Նա շախմատային խաղի իսկական գիտակ էր, պաշտպանական խաղի հզոր վարպետ ու գրեթե անպարտելի էր: Բնածին տաղանդի, մեծ աշխատասիրության շնորհիվ Տիգրան Պետրոսյանը կարողացավ շախմատային աշխարհում իր արժանի տեղը գրավել եւ նվաճել շախմատային օլիմպոսը՝ դառնալով աշխարհի 9-րդ չեմպիոնը, 6 տարի շարունակ (1963-1969) շախմատային թագը չզիջելով ոչ մեկին:

Հինավուրց ու իմաստուն խաղով Տիգրան Պետրոսյանը հրապուրվել է մանուկ հասակից: Առաջին լուրջ հաջողության հասել է 16 տարեկանում՝ 1945-ին նվաճելով նախ Վրաստանի, ապա եւ ԽՍՀՄ պատանիների չեմպիոնի տիտղոսները: Տեղափոխվելով Երեւան, Պետրոսյանը 1946-48-ին երեք տարի անընդմեջ նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: 1950-ին տեղափոխվելով Մոսկվա, Պետրոսյանը սկսում է վերելքը շախմատային աստիճաններով: 1951-ին նա նվաճում է Մոսկվայի չեմպիոնի կոչումը, ԽՍՀՄ առաջնություններում բաժանում 2-3-րդ տեղերը եւ իրավունք է ստանում հանդես գալու շախմատի աշխարհի առաջնության միջփնջային մրցաշարում: 1952-ին Տիգրան Պետրոսյանը հայ շախմատիստներից առաջինն է արժանանում միջազգային գրոսմայստերի կոչմանը:

Տիգրան Պետրոսյանը շախմատային փառահեղ ուղի է անցել, արժանացել է բազում մրցանակների: Նա ԽՍՀՄ քառակի չեմպիոն է, Մոսկվայի հավաքականի կազմում երեք անգամ դարձել է ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադայի հաղթող: ԽՍՀՄ հավաքականի կազմում Տիգրան Պետրոսյանը 9 անգամ դարձել է շախմատի համաշխարհային օլիմպիադաների չեմպիոն: Ընդ որում, 6 օլիմպիադաներում նա լավագույն արդյունքն է ունեցել իր խաղատախտակի վրա: ԽՍՀՄ հավաքականի կազմում դարձել է Եվրոպայի ութակի չեմպիոն: Պետրոսյանը մի շարք խոշոր միջազգային մրցաշարերի հաղթող է ճանաչվել: Պարգեւատրվել է «Ժողովուրդների բարեկամություն» եւ «Պատվո նշան» շքանշաններով, «Աշխատանքային արիության համար» մեդալով:



Երկու աշխարհահռչակ հայերը. Առնո Բաբաջանյան եւ Տիգրան Պետրոսյան

Պետրոսյանի շախմատային տաղանդի վառ դրսեւորումը աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճումն էր: 1962-ին հաղթելով Կյուրասաոյում անցկացված հավակնորդների մրցաշարում, որտեղ խաղում էին մի շարք հանրահայտ շախմատիստներ՝ Ռոբերտ Ֆիշերը, Միխայիլ Տալը, Եֆիմ Գելլերը, Պաուլ Կերեսը, Վիկտոր Կորչնոյը եւ այլք, Տիգրան Պետրոսյանն իրավունք ստացավ շախմատային թագը վիճարկելու խորհրդային շախմատի նահապետ, աշխարհի չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի հետ: Տարեց մարզասերները լավ են հիշում, թե ինչպես ողջ հայությունը ուշի-ուշով հետեւում էր Մոսկվայում ընթացող շախմատային երկու հանճարների մրցավեճին: Երեւանում, «Մոսկվա» կինոթատրոնի առջեւ տեղադրված շախմատի հսկա խաղատախտակի շնորհիվ շախմատասերները հաղորդակից էին դառնում շախմատային մրցախաղում ծավալված անհաշտ մրցապայքարին: Աշխարհի 9-րդ չեմպիոնը հայտնի դարձավ 1963-ի մայիսի 20-ին, երբ 22-րդ պարտիայում հասնելով ոչ-ոքի արդյունքի, Տիգրան Պետրոսյանը շահեց մրցախաղը: Դժվար է նկարագրել, թե այդ պատմական հաղթանակն ինչպիսի ցնծություն եւ ոգեւորություն էր առաջացրել Հայաստանում եւ սփյուռքում: Այն նաեւ մեծ խթան էր Հայաստանում շախմատի հետագա մասսայականացման եւ զարգացման համար: Այն, որ այսօր Հայաստանը շախմատային գերհզոր տերություններից մեկն է, դրանում իր մեծ ավանդն ունի հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկը՝ Տիգրան Պետրոսյանը, որի փառահեղ հաղթանակը շատերին ոգեշնչեց եւ հինավուրց խաղով հրապուրվելու եւ լրջորեն զբաղվելու մեծ խթան դարձավ: Երեք տարի անց Պետրոսյանը պաշտպանեց աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը՝ պարտության մատնելով նաեւ Բորիս Սպասկուն: Ճիշտ է, 1969-ին Սպասկուն հաջողվեց ռեւանշի հասնել Պետրոսյանի նկատմամբ ու դառնալ շախմատային թագի նրա հետնորդը: Ճակատագրի բերումով, դա տեղի ունեցավ 1969-ի հունիսի 17-ին՝ աշխարհի չեմպիոնի քառասունամյակի օրը:

Ցավոք, ճակատագիրն անողոք գտնվեց Պետրոսյանի հանդեպ: Նա կյանքից հեռացավ 55 տարեկանում՝ մահկանացուն կնքելով Մոսկվայում, 1984-ի օգոստոսի 13-ին: Երախտապարտ հայ ժողովուրդն արժանին մատուցեց իր տաղանդաշատ զավակին: Երեւանում կառուցված շախմատի տունը կոչվեց նրա անվամբ, պուրակում կանգնեցվեց մեծագույն շախմատիստի հուշարձանը: Հետագայում նրա հուշարձանները կանգնեցվեցին նաեւ Ապարանում եւ Երեւանի Դավիթաշեն թաղամասում, Երեւանում անցկացվեց Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարը:

Տիգրան Պետրոսյանը ոչ միայն մեծագույն շախմատիստ էր, այլեւ հիանալի անձնավորություն, ջերմ հայրենասեր: Նա շախմատային հսկայական ժառանգություն է թողել հետնորդներին: «Ամենամեծ պարգեւը, ամենամեծ երջանկությունն այն է, երբ քո երջանկությունը դառնում է ընտանիքիդ, ժողովրդիդ, ընդհանուրի երջանկությունը», ժամանակին ասել է Տիգրան Պետրոսյանը: Մեծագույն շախմատիստի, հայ ազգի արժանավոր զավակի փառքն ու հիշատակը երբեք չի խամրի: Նրա արժանավոր հետնորդներն էլ անեն կերպ ձգտում են բազմապատկել հայկական շախմատի նվաճումները, որոնց հիմքն իր անզուգական խաղով դրել էր աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանը:

ՖՈՒՏԲՈԼ

# Կական փրկեց բրազիլացիների պատիվը

**Ֆուտբոլի կոնֆեդերացիաների գավաթի խաղարկությունում մրցավեճի բռնվեցին «B» խմբում ընդգրկված հավաքականները: Չափազանց ծանր ու դժվարին ստացվեց աշխարհի հնգակի չեմպիոն բրազիլացիների մեկնարկը: Նրանց մրցակիցը Եգիպտոսի ընտրանին էր: 1963-ից հետո դա երկու հավաքականների միջեւ առաջին պաշտոնական հանդիպումն էր, որում բոլորը հաղթողի հավակնորդ էին համարում բրազիլացիներին:**

**«Ես ֆուտբոլիստներից մշտական առաջընթաց եմ պահանջում: Աշխարհի գավաթը նվաճելու համար հարկավոր է տիրապետել բրազիլական տաղանդին ու եվրոպական տակտիկական մտածողությանը»,- նշել էր Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դունգան: «Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկությունում մենք պայքարելու ենք մրցանակի համար: Մենք հարգում ենք մեր մրցակիցներին, սակայն դա չի փոխում մեր առջեւ դրված խնդիրը: Թեեւ այս մրցաշարը չես համեմատի աշխարհի առաջնության հետ, սակայն երկուսում հաղթելն էլ մեզ համար հավասարապես պատվաբեր է: Հաղթանակը հետագա հանդիպումների համար լավ նախադրյալներ կստեղծի», հայտարարել է բրազիլացի Լուսիոն:**

**Թվում էր, թե բրազիլացիները հեշտ հաղթանակ կտոնեն, մանավանդ, որ արդեն 5-րդ րոպեին Կական բացեց հաշիվը: Սակայն երեք րոպե անց Մոհամեդ Զիդանը գլխի հարվածով վերականգնեց հավասարակշռությունը: Հետագայում բրազիլացիները 2 գոլ խփեցին ու հաշվի մեջ առաջ անցան, սակայն եգիպտացիները դարձյալ վերականգնեցին հավասարակշռությունը: Թվում էր, թե խաղը կավարտվի ոչ-ոքի: Սակայն խաղավերջում եգիպտացի Էլմոհամադին ձեռքով կասեցրեց գնդակը եւ Կական վստահ իրացնելով 11 մ հարվածը, փրկեց բրազիլացիների պատիվը:**

**Դրամատիկ պայքարում անցավ նաեւ ԱՄՆ-ի եւ աշխարհի չեմպիոն Իտալիայի հավաքականների հանդիպումը: Առաջին խաղակեսում Դոնովանը 11 մ հարվածով առաջ մղեց ամերիկացիներին: Սակայն ընդմիջումից հետո երկու անգամ Ռոսին, մեկ անգամ էլ դե Ռոսին գրավեցին ԱՄՆ-ի հավաքականի դարպասը եւ 3-1 հաշվով հաղթանակ պարգեւեցին իտալացիներին:**

# Առաջին չեմպիոնները հայտնի են

**Բուխարեստում մեկնարկել է ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունը: Հայաստանի միակ պատվիրակ, Եվրոպայի մեծահասակների չեմպիոն Առաքել Միրզոյանը (69 կգ) մրցահարթակ դուրս կգա այսօր ուշ երեկոյան: Նա մեդալի ռեալ հավակնորդ է:**

**Իսկ առաջին չեմպիոնը հայտնի դարձավ մինչեւ 56 կգ քաշայինների մրցավեճում: Իր հավասարը չունեցավ չին ծանրորդ Զինգբիաո Վուն, որը երկամարտում ցույց տվեց 280 կգ (125+155) արդյունք: Նա 33 կգ-ով գերազանցեց արծաթե մեդալի արժանացած մոլդովացի Յուրի Դուդոգլոյին: Բրոնզե մեդալը նվաճեց ճապոնացի Յոհեի Իտոկազուն՝ 243 կգ (105+138):**

**Աղջիկների պայքարում աշխարհի առաջին չեմպիոնուհին թաիլանդցի Պանիդա Շամսրին է, որը հաղթող ճանաչվեց 48 կգ քաշայինների մրցավեճում: Նա ցույց տվեց 177 կգ (78+99) արդյունք: 2-րդ տեղը գրավեց կոլումբիացի Կատերին Մերկադոն՝ 172 կգ (176+96): Բրոնզե մրցանակակիր դարձավ թայլանդցի Ամոն Պումրուենը՝ 169 կգ (73+96):**

# Մրցաշարում եռիշխանություն է

**Ռումինիայի Բազնա քաղաքում մեկնարկել է շախմատի միջազգային մրցաշար 6 գրոսմայստերների մասնակցությամբ, որոնք գլխավոր մրցանակը կվիճարկեն 2 շրջանով անցկացվելիք հանդիպումներում: Ընդ որում, եթե 2 շախմատիստ առավելագույն միավորներ վաստակեն, ապա նրանց միջեւ լրացուցիչ մրցախաղ կանցկացվի հաղթողին որոշելու համար:**

**Երկու տուրից հետո աղյուսակը 1,5-ական միավորով գլխավորում են Ալեքսեյ Շիրովը, Վասիլի Իվանչուկն ու Բորիս Գելֆանդը: Նրանց կես միավոր է զիջում Թեյմուր Ռաջաբովը: Գասա Կամսկին ունի կես միավոր, իսկ Դիտեր Նիսիպյանուն առայժմ միավոր չի վաստակել:**

**Անցկացված 6 պարտիաների ուղիղ կեսն արդյունավետ ելք ունեցավ: Շիրովը հաղթեց Կամսկուն, Իվանչուկը պարտության մատնեց Նիսիպյանուին: Վերջինիս նկատմամբ հաղթանակ տոնեց նաեւ Գելֆանդը: Ռաջաբով-Գելֆանդ, Շիրով-Իվանչուկ, Կամսկի-Ռաջաբով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

# Կոտոն հաղթեց միավորներով

**WBO-ի վարկածով կիսամիջին քաշային կարգի աշխարհի չեմպիոն Միգել Կոտոն Նյու Յորքում կայացած մենամարտում հաղթեց նույն քաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Ջոշուա Կլոտիին: Արդեն առաջին ռաունդում Կլոտին հայտնվեց նոկդաունում, թեեւ հիմնականում հավասար պայքար էր ընթանում: 6-րդ ռաունդում Կոտոն մրցակցին մի քանի ուժգին հարվածներ հասցրեց, որի հետեւանքով վնասվեց Կլոտիի հոնքը: Չնայած արյունահոսությանը, Կլոտին շարունակում էր պայքարը: 12 ռաունդանոց մենամարտն ավարտվեց Կոտոյի հաղթանակով: Մրցավարներից երկուսը միավորներով հաղթանակը շնորհեցին Կոտոյին, իսկ 3-րդը նախապատվությունը տվեց Կլոտիին: Այս հաղթանակից հետո Կոտոն ընդգրկվեց ֆիլիպինցի Մենի Պակյայոյի հետ մենամարտելու հավանական մրցակիցների շարքում: Վերջինս պատրաստվում է ռինգ դուրս գալ տարեվերջին:**

# Հաղթանակը չհասցրեց նշել

**Նիգերիական «Բայելսա Յունայթեդ» ֆուտբոլային թիմի ավագ Աբել Թադորն անհայտ հանցագործների կողմից սպանվել է: Այդ օրը ոչ-ոքի խաղալով «Ուորի Վուլվզ» թիմի հետ, «Բայելսա Յունայթեդն» իր պատմության մեջ առաջին անգամ նվաճել էր չեմպիոնի տիտղոսը: 24-ամյա թիմի ավագը խաղից հետո մեքենայով վերադառնում էր տուն՝ հաղթանակը հարազատների հետ նշելու: Սակայն նրան վիճակված չէր հաղթանակի բերկրանքը երկար վայելելու: Իր տան մոտակայքում նա սպանվեց գլխից ստացած հրազենային մահացու կրակոցից: Ոստիկանության վարկածով սպանությունը կատարվել է հափշտակություն կատարելու պատրվակով:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հայտամրցույթի հրավէր

**Ոչ պետական բնագավառի գործիչների եւ տեղական իշխանությունների զարգացմանը միտված գործունեության ծավալումը գործընկեր երկրներում - Հայաստան**

**Հայտագրի համարը /128679/L/ACT/AM**

Եվրոպական հանձնաժողովը մրցույթի է հրավիրում Հայաստանի ոչ պետական բնագավառի գործիչներին եւ տեղական իշխանություններին՝ ոչ պետական բնագավառի գործիչների եւ տեղական իշխանությունների զարգացմանը միտված 2007թ. տարեկան գործողությունների ծրագրի ֆինանսական օժանդակությամբ: Դիմումների ներկայացման համար անհրաժեշտ ուղեցույցների փաթեթը կարող եք ստանալ Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունից

**Հասցեն՝ Հայաստան, Երեւան 0002, Ֆրիկ փող. 21** կամ հետեւյալ կայքէջերից.

- Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության կայքէջ՝

**www.delarm.ec.europa.eu**

- EuropeAid-ի պաշտոնական կայքէջ՝

**http://ec.europa.eu/europeaid/cgi/frame12.pl .**

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը 2009 թ. սեպտեմբերի 21-ն է (երկուշաբթի), տեղական ժամանակով ժամը 16:00:

Այս հայտամրցույթի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումը տեղի կունենա 2009թ օգոստոսի 10-ին, ժամը 14:00, Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունում:

**Հասցեն՝ Հայաստան, Երեւան 0002, Ֆրիկ փող. 21**

# Local publication for call for proposals

**Non-State Actors and Local Authorities in Development Actions in Partner Countries Armenia**

**Publication reference 128679/L/ACT/AM**

European Commission is seeking proposals for the actions from Non-State Actors and Local Authorities in Armenia with financial assistance from the Non-State Actors and Local Authorities in Development Annual Action Programme 2007. The full Guidelines for Applicants are available for consultation at:

EC Delegation to Armenia

**21 Frik Street, Yerevan 0002, Armenia**

and on the following internet site:

- Delegation of the European Commission to Armenia:

**www.delarm.ec.europa.eu**

- EuropeAid website:

**http://ec.europa.eu/europeaid/cgi/frame12.pl .**

The deadline for submission of Applications is Monday, 21 September 2009, 16:00 local Armenian time.

An information session on this call for proposals will be held on Monday, 10 August 2009 at 14:00 local Armenian time, in the Delegation premises at:

EC Delegation to Armenia

**21 Frik Street, Yerevan 0002, Armenia**

# Մրցույթի հրավէր 061/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ տեխնիկական բնութագրերի մշակում՝ միջին մասնագիտական կրթության քոլեջների համար լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հուլիսի 15, ժամը 17:00:

## Letter of Invitation 061/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Identification and development of technical specification of laboratory equipment for vocational training institutions services. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 15 July 2009, 17:00 local time.

# Մրցույթի հրավէր 079/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանում գործող խոշոր կաթսայական տեղակայանքների տեխնիկական էներգետիկ աուդիտի իրականացման եւ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծառայությունների շուկայականացման կարողությունների ստեղծման համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հուլիսի 08, ժամը 17:00:

## Letter of Invitation 079/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Capacity Building for Implementation of Technical Energy Audit and Commercialization of Energy Efficiency Enhancement Services Proposed as a Result of the Audit in Operating Large-size Boiler Plants in Armenia services. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 08 July, 2009, 17:00 local time.

www.azg.am

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր դրամագիտական հավաքածուն համալրելու նպատակով գնում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից հին ու նոր դրամանիշեր՝ մետաղադրամներ եւ թղթադրամներ, որոնք տարբեր ժամանակահատվածներում շրջանառության մեջ են եղել պատմական Հայաստանի տարածքում:

Դրամանիշերի գնման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծված է «Դրամանիշերի փորձաքննության եւ գնահատման հանձնաժողով», որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի շենքում յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 10-00 մինչեւ 13-00:

Դրամանիշեր վաճառել ցանկացողները կարող են անձը հաստատող փաստաթղթով ներկայանալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ հետեւյալ հասցեով՝ 0010, Երեւան, Դեղատան 3:

Տեղեկությունների համար զանգահարել հեռախոսահամարներով՝ 59-29-03, 56-16-55:

*ՀՀ կենտրոնական բանկ*

# Դասախոսական կազմի ընդունելություն Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում (ՀՖՀՀ)

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը միջպետական բուհ է, որը շնորհում է Ֆրանսիայի եւ Հայաստանի պետական նմուշի դիպլոմներ (Licence/Բակալավրիատ, Master/Մագիստրատուրա), որոնք հաստատված են Բոլոնիայի համաձայնագրով:

2009-2010 ուստարվա ընդունելության համար Հայաստանում ֆրանսիական համալսարանն աշխատանքի է հրավիրում դասախոսների հետեւյալ առարկաների գծով.

Իրավաբանություն

Ֆինանսներ, հաշվապահություն, աուդիտ

Մարքեթինգ

Տնտեսագիտություն

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) ֆրանսերեն եւ ուսանողների ղեկավարման համար պատասխանատու փորձառու դասախոս (նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործում)

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) անգլերեն

Ներկայացվող պահանջները

✓ Գիտությունների թեկնածու

✓ Մասնագիտական փորձ

✓ Դասավանդման փորձ

✓ Ֆրանսախոս կամ անգլախոս

Աշխատավարձը կախված է որակավորումից:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ՀՖՀՀ-ի գլխավոր քարտուղար պ. Ալեքսանդր Մարտինետին, **secretaire_general@ufar.am**

- ինքնակենսագրություն (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)
- մոտիվացիոն նամակ (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)

Դիմումները ներկայացնել մինչեւ 2009թ-ի հունիսի 30-ը:

Հարցազրույցի կհրավիրվեն ընտրված թեկնածուները:

ՀՖՀՀ-ին մանրամասն ծանոթանալու համար այցելել մեր ինտերնետային կայք www.ufar.am կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-17:00, (010) 24 96 64:

# Մրցույթի հրավէր 059/09-PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ «Աջակցություն պահպանվող տարածքների ազգային գործողություններին կենսաբազմազանության մասին կոնվենցիայի աշխատանքային ծրագրի շրջանակներում» ծառայություններ մատուցելու համար:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հունիսի 26, ժամը 17:00:

## Letter of Invitation 059/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Supporting Country Action on the CBD Programme of Work on Protected Areas in Armenia, services. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 26 June 2009, 17:00 local time.

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 16.06.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 367.69 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 511.53 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.77 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 223.28 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: